№ 114 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 28

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ամեն տող 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 114 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 28

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տան ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակները և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՅԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

կամենալով օգնութեան հասնել այն տանտէրերին, որ դժուարանում են այս կամ այն պատճառով իրանք կատարել վարչութեան պահանջած (պարտ. որոշմ. հիման վրա) աշխատանքները, այն է՝ ամեն տեսակի մայթերի կանօնաւորելը, նրանց վրայի ՖՓոսերը ոչնչացնելը, ցանկ շինելը և այլն, առաջարկում է տանտէրերին այդ աշխատանքների կատարելը յանձնարարել վարչութեան՝ իրանց հաշվին, քանի որ վարչութիւնը հնարաւորութիւն ունի աշխատանքները արագ ու էժան կատարել։ Սրա հետ միասին վարչութիւնը դարձեալ յիշեցնում է, որ թէև շատ տանտէրներ սկսել են ցանկերն ու մայթերը կանօնաւորել, բայց սակայն կան նաև ուրիշ շատ մարդիկ, որ դեռ չեն ձեռնարկել այդ աշխատանքներին, թէև դրա համար կատարել հնարաւորութիւն ունեն։ Ի նկատի ունենալով, որ հիմա ամենայարմար ժամանակն է այսպիսի աշխատանքներ կատարելու համար, վարչութիւնս, ձեռնարկելով արձանագրութիւնները անյողդող կերպով կազմելուն, մի անգամ էլ խնդրում է տանտէրերին ինքնակամ ի կատար ածել իրանց պարտաւորութիւնները քաղաքի առաջ, մանաւանդ, որ դա ուղղակի համապատասխանում է իրանց՝ տանտէրերի և բոլոր ազգաբնակութեան շահերին։ Այս հարցի մասին ամեն տեղեկութիւն կարելի է ստանալ վարչութեան շինարար. բաժանմունքում ամեն օր, ցերեկվայ ժամի 10-ից մինչև 2-ը։ 1—4

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

որդիքը և եղբօրորդիքը յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին, որ այսօր, մայիսի 28-ին, ժամը 11-ին, ս. պատարագից յետոյ, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կատարվելու է հոգեհանգիստ իրանց սիրելի հօր և հօրեղբօր անմոռանալի յիշատակին։ 1—1

Հոխիսիմէ և Յակոբ Առվանեանները յայտնում են իրանց դուստր Թիֆլիսի երկրորդ գիմնազիայի I դասատան աշակերտուհի

ԹԱԳՈՒՀԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 27-ին։ Յուղարկաւորութիւնը տանից (Елизаветинская № 178), դէպի Խօջիվանքի գերեզմանատունը տեղի կունենայ այսօր, ամսիս 28-ին, ճիշտ ժամը 12-ին։ 1—1

Մինչև յունիսի 10-ը լոյս կը տեսնի

ԴՐ. ԶԱԼԻՄԻՆԵԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(հայերէն լեզուով)

Գինն է 15 կոպ.

Հրատարակութիւն Անդրէաս Աւագեան Ըովհաննիսեանի, որի հասցէն՝ Тифлисъ, Книжн. магазинъ «Пушкинъ»։ Գումարով գնողներին 20% զեղչ, մեր ճանապարհածախսով։

(2.Կ.) առ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ վշտեր. Վերջին տեղեկութիւններ. Կովկասեան պատգամաւորներ. Հայ-Թուրքական խորհրդակցութեան վերջին նիստը. Պաշտօնական. Մամուլ. Թիֆլիսի պագամաւորի ընտրութիւնը Պետական Դումայի համար. Պլեխանովի նամակը։ Նոր կանապարհ. Դժոխքի բոյնը. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Հին-Նդիայից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԵՊՈՒԹԻՒՆ.—Արաբին լուրեր. Պետական Դումա. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հնարիւ Իրէն.

ԴԱՐՁԵԱԼ ՎՇՏԵՐԻ ՄԷՋ

I

Այսօրվայ մեր ստացած տեղեկութիւնները Երևանից և Շուշուց վերին աստիճանի վրդովեցուցիչ են։

Դարձեալ անմեղ զոհեր, մահաբեր ընդհարումներ և իրարանցումներ։

Երևանի անապատելի դէպքը, ճիշտ է, տարբերվում է Շուշու գաւառի չարաբաստ դէպքերից իբրև յանկարծակի մի բռնկում, բայց արդիւնքը միատեսակ սոսկալի է և նորից մեր առաջն է բողոքում անմեղ արիւնների ուրուականը իր սրամտանջ հարցերով՝ թէ մինչև երբ պէտք է շարունակվեն այսպիսի կոտորածները, մինչև երբ պէտք է մեր ժողովուրդը մաշվի-տապակվի իր անվերջ հոգեկան տանջանքների մէջ։

Ասում են, որ Երևանում դէպքը առաջ է եկել իբր թէ պատահական հանդամանքներից։ Բայց տեսնք, թէ ինչ սոսկալի արդիւնքներ է նա տուել։

Ի՞նչ է պատճառը։

II

Ի՞նչ է պատճառը, որ մի մասնաւոր դէպք յանկարծ փոխարկվում է արիւնահեղ սոսկալի ընդհարման և մի քանի բօպէի մէջ տասնեակ սպանվածներ և վիրաւորներ գետին են գլորվում։

Պատճառն այն է, որ մարդիկ վստահութիւն չունեն դէպի միմեանց, վստահութիւն չունեն դէպի վարչութիւնը։

—Զենք ուզում կուել, ասում է իւրաքանչիւր հայ և Թուրք։

Եւ չէ ուզում։

Բայց նա համոզված չէ, որ իրանից դուրս գտնվող դաւեր չեն գործադրում իրանց մեքենայութիւնները։ Եւ այդ պատճառով նա կասկած է պահպանում դէպի դրսի գործօնները։

—Ես չեմ ուզում կուել, բայց եթէ ինձ վրա յարձակվում են, ես էլ պէտք է դիմադրեմ կամ պաշտպանվեմ։

Այդպէս է զգում, այդպէս է ձևակերպում և այդպէս է վարվում թէ հայը և թէ Թուրքը։

Երբ չը կայ հաւատ և վստահութիւն, այն ժամանակ բոլորովին հասկանալի է դառնում, թէ ինչու ամենափոքր մի դէպք պատճառ է դառնում մեծ ընդհարումների։

III

Շուշու գաւառում կատարվող եղելութիւնները ամենապարզ կերպով մեզ ցոյց տուին, թէ որ աստիճանի ապիկար և անարժան հանդիսացաւ տեղական վարչութիւնը երկրի խաղաղութեան գործում։

Նրա կարգադրութիւններից շատերը մի մի մեղադրական կէտեր են իր դէմ։ Հայ ժողովուրդը կորցրեց իր ամբողջ վստահութիւնը այդ վարչութեան վերաբերմամբ և նրա աչքում տեղական վարչութիւնը ոչ թէ այն անկողմնապահ և արդարադատ հաստատութիւնն է, որպիսին պէտք է լինէր վարչութիւնը խսկապէս, այլ մի թշնամի, անբարեացակամ մի գործօն, որը ոտի տակ է տալիս ժողովրդի արդար ձայնը։

Այդ վարչութեան մի մասը գէներալ Գօլօշչապօվի նշանակվելով փոխվում է, բայց թոյնը գործել է ամիսներ շարունակ և ով գիտէ կայողվի արդեօք շուտով նրան չքացնել։

IV

Եթէ Երևանի վարչութիւնը համեմատաբար աւելի լաւ է եղել, քան Գանձակի նահանգինը, դարձեալ ժողովրդի մէջ, նոյն իսկ Երևանեան շրջանում, շարունակվել է յուզված տրամադրութիւնը, որովհետև իւրաքանչիւր մարդ հարց է տուել թէ ինչու է հարևան նահանգում շարունակվում ազգերին բաժանելու, ազգերին կռուացնելու սիստեմը։

Եւ որովհետև մեր մերձաւոր անցեալը չափազանց թարմ տպաւորութիւններ է թողել բոլորի վրա, հասկանալի է, որ իւրաքանչիւր մարդ որոշ կասկածից չէ կարողանում ազատվել։ Եւ դժբաղդաբար ընթացիկ փաստերը տալիս են այդ կասկածի հիմնաւորութեան նորանոր ապացոյցներ։

Զարմանալի դաւադրութիւնը չափազանց շատ ստոր և վտանգաւոր խաղ է սարքել և մենք տեսնում ենք, որքան դժուար է նրա դէմ մաքառելը և նրան ընկնելը։

V

Մենք կամաւ չենք հաղորդել մեր ընթերցողներին շատ լուրեր այն դաւադրութիւնների մասին, որոնք իբր թէ պատրաստվում են այս ու այն կողմում։

Այդ չենք արել, որովհետև սխալ և չափազանցված լուրերը կարող են իրանց վնասակար արդիւնքները առաջացնել։ Եւ պէտք է այն էլ ասենք, որ յաճախ այդ լուրերը տարածվում են չար նպատակներով։

Սակայն այդ լուրերի տարածվելը և նրանց ընդունվելը հասարակութեան զանազան խաւերում, ցոյց են տալիս, որ ազգաբնակութիւնը ամենևին վստահ չէ, թէ տեղական վարչական մարմինները արդարև անկեղծ կերպով ձգտում են կատարեալ խաղաղութեան։

Եւ դժբախտաբար վարչութիւնը համոզել ապացոյցներ չէ տալիս իր կատարեալ շիտակութեան։

Եւ ահա արդիւնքները։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևան, 27 մայիսի.

Այսօր, առաւօտեան ժամի 9-ի մօտերքը, քաղաքում յանկարծ բռնկվեց հրացանաձգութիւն։ Սպանված և վիրաւորված են աւելի քան 20 հոգի, որոնց մեծ մասը հայեր են։

Ընդհարման պատճառը դեռ ևս յայտնի չէ։ Վարչութիւնը ձեռք առաւ անմիջապէս միջոցներ կանգնեցնելու հրացանաձգութիւնը։

Երևան, 27 մայիսի, 2 ժամին ցերեկվայ

Այսօր, մայիսի 27-ին, տեղի ունեցաւ ընդհարում հայերի և Թուրքերի մէջ։

Այդ ընդհարումը բոլորովին անսպասելի էր և առաջ է եկել դիպուածօրէն։

Այսպէս են պատմում եղելութիւնը։ Բազարում չորս Թուրք վիճում են միմեանց մէջ։ Այդ վէճը դեռ չը վերջացած յանկարծ պարզվում է ատրճանակ. յայտնի չէ թէ ով էր ատրճանակ արձակողը։

Ատրճանակի ձայնից բազարում եղած ժողովուրդը իրարանցման մէջ է ընկնում։ Սկսում են բոլորը փախչել բազարից։ Աղմուկի ժամանակ սկսվում է հրացանաձգութիւն։ Զոհվել են անմեղ մարդիկ։ Սպանվել են 11 հայ, 2 Թուրք և 1 մօլլան։ Վիրաւորվածների ընդհանուր թիւը հասնում է 16-ի։

Զօրքը անմիջապէս շրջապատել է բազարը. խանութները փակված են։ Լսվում է հատ-հատ հրացանաձգութիւն։

Մի Թուրքի ձեռքով սպանվում է էջմիածնի թանգարանի կառավարիչը։ Սպանողը ձերբակալված է։

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել Շուշուց, որ հայերի և Թուրքերի մէջ տեղի է ունեցել գաւառում խոշոր ընդհարում։ Թուրքերը յարձակվել են հայերի վրա։ Հայերից սպանվել են մի քանի հոգի։ Այնուհետև հայերի մի խումբ յարձակվել է Թուրք գիւղի վրա։

Ասկերանը գտնվում է ռուսական զօրքի վերահսկողութեան տակ։

Ադդամի շրջանում գտնվող հայ գերիների մասին լուրերը մինչև այժմ չեն կարողանում պարզ կերպով ասել թէ արդեօք որքան մարդ է մնացել և ովքեր են նրանք։

Գերիներին յետ վերցնելու համար միջնորդութիւն են արել բացի հայերից նաև Թուրքերը, բայց մինչև այժմ բաւարար պատասխան չէ ստացված։

Բախշի Արամեանցի համար Թուրքերը մի քանի օր առաջ պահանջ էին դրել, որ վերջնեն մեծ փրկանք։ Բայց յետոյ Թուրքերը ընդհատեցին բանակցութիւնները։ Ներկայումս ճիշտ կերպով յայտնի չէ թէ արդեօք կենդանի է Արամեանը թէ զոհվել է աւազակների ձեռքում։

—

Լուր կայ, որ Ադդամի շրջանի Նօվրուզ տեղում գտնվում է գերի մի հայ։ Թէ ով է նա, յայտնի չէ, բայց ըստ երևոյթին յայտնի անձնաւորութիւն է։

—

Գեներալ Գօլօշչապօվը հեռագրել է Շուշու և միւս գաւառապետներին, որ գործ դրվեն ամեն տեսակ եռանդուն միջոցներ ազատելու գերիներին և առհասարակ հաշտեցնելու կռուող կողմերը, վերադարձնելու կողոպտած իրերը, դրաստելու փչացրած ճանապարհները քոչի ուղիներում, բռնելու յանցաւորներին։

—

Շուշի, մայիսի 23-ին

Վերջին օրերս շատ-շատերին յայտնի Զաֆար-բէկ Վեզիրովը Ադդամից հեռագրում է Շուշու գաւառապետ Ֆրէյլիխին, որ Ադդամի շրջակայքում լոյս է ընկել 30 հոգուց բաղկացած մի աւազակային խումբ, զինված երեք գծանի հրացաններով, խնդրում է գաւառապետին դնել իրան—Վեզիրովի իրաւունքի տակ կօզակների մի խումբ՝ աւազակներին ձերբակալելու կամ հալածելու համար։

Արդեօք, Զաֆար-բէկի այդ հեռագիրը կապ չունի վերջին օրերս Ադդամի մօտակայքում հայ ճանապարհորդներին Թուրքերի ձեռքով գերված և սրախողխող եղած դէպքի հետ, կարծել սալու ադմինիստրացիային և «միամիտ» հայերին, որ այդ տմարդի դէպքը աւազակային խմբի գործ էր...

Χ

—

Գօրիս, 20 մայիսի

Սպանութեան դէպքերը հատ-հատ են, բայց վրդովում են մարդկանց տրամադրութիւնը։ Եաղիշ գիւղի Թուրքերը սպանել են Ցակոբեանցի դաշտային պարապմունքների ժամանակ։

—

«Кавказъ»-ը հաղորդում է, որ մայիսի 22-ին Արէշի գաւառի Ղայաբաշի գիւղին մօտիկ Թուրքերը սպանել են մէկ հայի, վիրաւորել մէկին և երեք հոգու էլ գերի տարել։

—

Խանքենդ-աւան, 24 մայիսի

Ներկայ ամսիս 22-ին գիշերը Զանգեզուր գաւառի քրդերը պաշարելով Դահրաւ գիւղի անտառում գտնված ածխահարերը, սպանում են մի ածխագործ հայի, միւսին վիրաւորում, 10-ին գերի տանում, որոնցից 4-ը փախչելով ազատվում են։ Հայերը Թնդանօթների և կօզակների սարափից ոչ մի գէնք չեն վերցնում, ոչ միայն դրանց գէնքն է խլվում, այլ ծանր պատիժներ են կրում և տուգանքներ վճարում։

Խալիփալու գիւղի Թուրքերը «Բեխի» աղբիւր կոչված տեղից քշելով տարել են Շուշի քաղաքացիների եղջիւրաւոր անասունները։ Պրիստաւը իր սորժնիկներով գնաց Խալիփալու, յետ բերելու անասունները, բայց Թուրքերը գնդակների տարափ թափելով Թոյլ չը տուին պրիստաւին գիւղը մտնելու։ Նա հարկադրված վերադարձաւ և գիշերեց Ղայբալի հայ գիւղում (խեղճ հայ, Թուրքն աշխարհք քանդեց, բայց քո անունդ է հռչակվում) և միւս օրը նոր ոյժեր ստանալով նորից գնաց Խալիփալու, բայց դեռ չէ վերադարձել, որ իմացուէր թէ նրա այդ գործունեաքը ինչ հետևանք է ունեցել։

Գանձակի նահանգի գեներալ-նահանգապետ Ալիխանի Խանքենդ գալուց և Մալիբէկլուի Թուրքերին այցելութեան գնալուց յետոյ, Թուրքերը մի տեսակ համարձակութիւն են ստացել. ասել թէ նրանց՝ հայերի դէմ չարութիւններ է ներշնչել, դժուարին է ասել, փաստը բացակայում է, սակայն Եալախից մինչև Շուշի, Մալիբէկլու և Զանգեզուրի քրդերը այժմ բաւական համարձակ են, որ առաջ չը կար, և այդ՝ գեներալը այդ տեղերը ոտը դնելուց յետոյ։ Ասենք գեներալը Զանգեզուրում չէ եղել, բայց Ադդամը, որտեղով անցել է գեներալը և Մալիբէկլուն, որին գեներալը ասիս 16-ին այցելութիւն տուեց, լեռնային ճանապարհով կապված են Զանգեզուրի քրդերի հետ, շարունակ երթևեկութիւն ունեն։

Ե՞րբ պէտք է երկիրը խաղաղվի, ե՞րբ պէտք է ամեն մարդ իր գործով զբաղվի... Զը նայելով, որ մեր երկիրը խաղաղված չէ, նորից հոսում է մարդկային արիւնը, նորից կենդանացել են չարչարանքների և տառապանքների արհաւիրքները. դրանց բաւական չեն, ընութիւնն էլ մի կողմից է կատաղել. 2 օր սրանից առաջ Դաշբուլաղ, Խանցկ, Դահրաւ, Մեհտիշէն և Պարեցիք գիւղերի այգիների և արտերի մի մասը կարկտահար արեց, հողի հետ հաւասարեց, թողեց գիւղացու ձեռները ծոցումը։ Հայի համար սա էլ մի պատուհաս է։

***

—

Ուլիա-Նորաշէն գիւղ, մայիսի 20-ին

Անցեալ մայիսեան հայ-Թուրքական ընդհարումներից յետոյ ուլիա-նորաշէնցիներս ապրում ենք շատ վատ պայմանների մէջ, զրկված ենք տանից, կարողությունից։ Այժմ ժողովուրդը ապրում է մոխրակոյտերի վրա, ոչ կանօնաւոր սնունդ կայ և ոչ կարգին բնակարաններ կան. ամեն մի հիւանդութիւն Ուլիա-Նորաշէնում կարելի է գտնել, 100-ից աւելի զոհեր ենք տուել։ Բացի այդ, այժմ մենք զրկված ենք մեր դաշտի կանաչ ցորենեներից, հարևան Թուրք գիւղերի նախիրները կերել և բոլորովին փչացրել են մեր արտերը. Թուրքերը բռնի կերպով վարում են մեր հողերը և ցանում. այժմ սկսել են նոր ցանած բամբակները ոտնակոխ անել, փչացնել։ Օրական մի քանի անգամ գանգատվում ենք գաւառապետի օգնական Սկիբինսկուն և պրիսաւ Մամլաշվիլին, բայց մեր բողոքը մնում է ձայն բարբառոյ յանապատի։ Ամսիս 18-ին մեր գիւղացի Բարթուղիմոս Յովսէփեանը, յայտնի քաջ երիտասարդը, հարկաւոր գործով գնում է Խանլուխար, վերադարձին մեր գիւղացիք Բարթուղիմոսին տեսնում են Դաշարին Թուրք գիւղի մօտ. մինչև այժմ ոչ ձին է երևում, ոչ էլ գիակը։

Ա. Շահնազարեան

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

—

Երէկ, մայիսի 27-ին, Թիֆլիսի նահանգի լիազօրները, լրացուցիչ ընտրութիւններ կատարելով ազնուականութեան ժողովարանում, ընտրեցին Պետական Դումայի պատգամաւորներ Թիֆլիսի նահանգի կողմից բժիշկ Այվազեանցին և Ծերեթելուն, որոնցից իւրաքանչիւրը ստացաւ 25-ական սպիտակ քուէ, ընդդէմ 21 սևի։

Այդպիսով Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի նահանգի կողմից ընտրված են չորս հոգի՝ Ժորդանիա, Բարաթով, Այվազեանց և Ծերեթելի։

—

Ընդամենը Անդրկովկասից ընտրվել են Պետական Դումայի պատգամաւորներ հայերից չորս հոգի՝ բժիշկ Բահաթրեան, Գ. Տէր-Պետրոսեան, Լ. Թումանեան և բժիշկ Այվազեան։

—

Այսօր Թիֆլիսից դէպի Պետերբուրգ է ուղևորվում Գանձակի նահանգի հայ պատգամաւոր բժիշկ Բ. Բահաթրեան, որը Օրէնբուրգից եկել էր Գանձակ և ուղևորվել հայրենի Շուշի քաղաքը։

Բժիշկ Բ. Բահաթրեանը ստացել է իր նախնական ուսումը Լազարեան ճեմարանում, ապա ուսանել է բժշկութիւն Մոսկվայի համալսարանում։

Իր գործունէութեան մեծագոյն մասը բժիշկ Բահաթրեանը անց է կացրել Շուշում և յայտնի է այնտեղի հասարակութեան մէջ իբրև շիտակ և ազնիւ անձնաւորութիւն, հետաքրքրվող հասարակական խնդիրներով։

Վերջին հայ-Թուրքական խռովութիւնների ժամանակ նա մասնակցում էր իբրև հայերի ներկայացուցիչ խաղաղարար յանձնաժողովներում և բոլոր այն գործառնութիւնների մէջ, որոնք նպատակ ունէին վերջ դնել գժոխային անմիտ կոտորածներին։

—

Շուշի, մայիսի 24-ին

Պետական Դումայի անդամ բժ. Բահաթրեանի հրաւէրով երէկ, ամարային կլուբի դահլիճում, մի բազմամարդ միտինգ կար։ Պ. Բահաթրեան յայտնեց ժողովրդին իր «դաւանանքը Պետական Դումայում» և ուզեց իմանալ իրան ընտրող ժողովրդի կարծիքն ու մօտաւոր պահանջները։ Ժողովը վստահութիւն յայտնեց բժ. Բահաթրեանին, որ նա թարգման կը լինի Դումայի առաջ, Կովկասի միւս քաղաքների ներկայացուցիչների հետ միասին, Կովկասի վերաբերմամբ առանձնապէս, և կաշխատէ, որ Կովկասը ևս վայելէ այն իրաւունքներն ու արտօնութիւնները, ինչ որ ազատ սահմանադրութիւն սպասող Ռուսաստանը։ Ժողովականներից մի քանիսը աւելի աւելի պահանջ յայտնեցին—լուծել բիւրօկրատիան, մինիստրական կազմը և ապա թէ սպասել ազատ սահմանադրութեան։

Բահաթրեանը սահմանադրական սկզբունքների կուսակից է։

—

Մայիսի 31-ին Բաթումում նշանակված է Պետական Դումայի նահանգական պատգամաւորի ընտրութիւնը։ Լիազօրներին Սուխումից Բաթում բերելու համար, գործադրվի պատճառով, Կովկասեան Փոխարքան կարգադրել է յատուկ բարկաս ուղարկել։

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

—

Երեքշաբթի, մայիսի 24-ին տեղի ունեցաւ հայ-Թուրքական խորհրդակցութեան նիստը Փոխարքայի դիւանատան դահլիճում։

Նիստին ներկայացան խնդրատուների մի քանի խմբեր։

Մի մեծ խումբ, կազմված Ղազախի գաւառի հայ և Թուրք 15 գիւղերից, մանրամասն նկարագրելով գիւղացիների ծանր վիճակը, յայտնեց, որ Լեվիցկու հեռանալուց յետոյ գաւառը նորից ընկնում է անապահով և անպաշտպան դրութեան մէջ։ Ներկայացուցիչները յայտնեցին, որ վաճառների գումարների ժողովելը և ծախսելը կատարվել է անբաւարար կերպով։ Գանգատվող գիւղերից յիշատակենք Թուրք Սօֆլու, Զաֆարլու, Ալաչլը Ղայա, Աղբիւլուա, Փօլադ-Այրում, Գեօգեարչին, Աթամաղալի, հայ Ուզունթալա, Իպիս, Լալաբենդ և ուրիշ գիւղեր։

Բադա գիւղի ազգաբնակների մի խումբը նորից յիշեցրեց այդ թշուառ գիւղի անելանելի դրութեան մասին և խնդրեց օգնութիւն վերականգնելու գիւղը և ապահովելու երկրագործների կեանքը։

Արէշի գաւառի վնասված վեց հայ գիւղի կողմից ներկայացաւ մի խումբ, որը զեկուցեց թէ 1, գիւղացիները ներկայումս մեծ կարօտութեան մէջ են 2, ցանքերի մի մասը անխնամ մնալու պատճառով այրվել, փչացել է, 3, գիւղացիները միջոցներ չունեն վերանորոգելու իրանց տները և վերականգնելու իրանց անասնութիւնը, 4, գնահատող յանձնաժողովը, որ եկել է գիւղերը, ցածր է գնահատել հայերի վնասները, զեկավարվելով Թուրքերի ցուցումներով և 5, գաւառում չը կան մարդիկ, որոնք զեկավար կամ միջնորդ հանդիսանային գիւղերի վերաշինութեան կամ հողերի փոխանակութեան գործին վերահսկելու համար։

Խնդրատուների խնդիրները ընդունվեցին։ Որոշվեց նկատի առնել անմիջապէս այն բոլորը, ինչ որ յայտնեցին գանգատաւորները։

Նախագահը զեկուցեց, որ Փոխարքան առաջել է ֆինանսների մինիստրից հեռագիր այն դրամական նպաստի մասին, որ խնդրել էր հայ-Թուրքական խորհրդակցութիւնը աւերված գիւղերի և աղէտաւորների համար։

Մինիստրի հեռագիրը մերժողական է։ Ահա հեռագրի թարգմանութիւնը.

Պետերբուրգ, 20 մայիսի, 8 ժ. 40 ր.

Կովկասեան Փոխարքային.

Անդրկովկասի ազգաբնակութեանը օգնելու խնդիրը իմ կարծիքով ունի կարեւոր սեզրունքային նշանակութիւն։ Անհրաժեշտ է առաջել նրան լուծելու նպատակով նոր օրէնսդրական կարգով ներքին գործերի մինիստրի միջոցով։ Իմ կարգադրութեան տակ համապատասխան աղբիւր չը կայ։ Դժուարանում եմ պետական գանձարանի միջոցների դրութեան պատճառով՝ ցոյց տալ մի միջոց պահանջին բաւարարութիւն տալու։

Ցիմանսների մինիստր Կոկովցեվ

Փոխարքան, ստանալով հեռագիրը, մակագրել է վրան հետևեալը. «Պէտք է գտնել Նօրդէի միջոցով»։

Ա. Քալանթար յայտնեց, որ նոր դիմումներ պէտք է անել ընդգծելով հարցի կարեւորութիւնը երկրի անտեսութեան վերականգնման համար։ Մինիստրությունը անշուշտ սխալ հայեացք է կազմել կովկասեան դէպքերի մասին և չէ ըմբռնում տեղական պահանջի նշանակութիւնը։ Այժմ պէտք է աւելի համոզեցուցիչ ձևակերպութեամբ նորոգել խնդիրը։

Ս. Յարութիւնեան, խօսելով Ղազախի գաւառի վնասների գումարների մասին, յայտնեց, որ պէտք է դադարեցնել նրանց ժողովելը։ Լեվիցկին շտապ հաւաքել էր և շտապ էլ բաժանել։ Բայց բոլոր գումարը չէ բաժանվել և կարիքաւորներից շատերը չեն ստացել։ Պէտք է մնացած գումարը բաժանել նախկին ցուցակներով, իսկ յետոյ մտածել նոր կարգադրութիւնների մասին։

Լ. Մարգսեան։ Ղազախի գաւառը մի փոքր է։ Պէտք է այդտեղ լաւ կազմակերպել գործը, որ նա օրինակ լինի ուրիշ տեղերի համար։ Տեղական ընտրեալները պէտք է այդտեղ ներգործական դեր կատարեն։ Կարևոր է նոյնպէս հողերի փոխանակութեան վերաբերութեամբ օգնել գիւղացիներին որոշ զեկավարութիւն ցոյց տալով այդ գործում կամ մեր կենտրոնական խորհրդակցութեան կողմից կազմված կամ տեղական յանձնաժողովի միջոցով։

Կ. Ստեփանեան։ Այդ բոլոր խնդիրները մասնաւոր երևոյթներ են, որոնք պէտք է մտնեն ընդհանուր գործունէութեան սիստեմի մէջ։ Մենք պէտք է նախկին իրաւունքների սահմանները ուրուագծենք։

Ա. Զիւլգադարով հարց է յարուցանում թէ արդեօք չէը կարելի Ղազախի գաւառի չը բաժանված գումարի մի մասը յատկացնել Բադա գիւղի բնակիչներին։

Այդ առաջարկութիւնը մերժվեց։

Այնուհետև կարդացվեց այն ընդհանուր ծրագիրը, որ մշակել էին խորհրդակցութեան անդամները իրանց մասնաւոր նիստերում։

Ահա այդ ծրագիրը.

1) Հայ և մահմեդական հասարակութիւն-

ների ներկայացուցիչներից կազմված յատուկ այն յանձնաժողովների նպատակը, որոնք կազմվում են Փոխարքայի, նահանգապետների, գաւառապետների և գաւառամասային պրիստաւների մօտ այն շրջաններում, ուր հայերը և Թուրքերը ապրում են խառն միմեանց հետ, կայանում է այն բանի մէջ, որ հաստատվի խաղաղ յարաբերութիւններ հայերի և Թուրքերի մէջ։

2) Իւրաքանչիւր խորհրդակցութիւն ունի արտակարգ և հերթական նիստեր, որոնց համար նախագահ ընտրվում է խորհրդակցութեան անդամների միջից։ Այդ խորհրդակցութեան մէջ մտնում է և տեղական վարչութեան ներկայացուցիչը. կենտրօնական խորհրդակցութեան նախագահը նշանակվում է Փոխարքայից։

3) Խորհրդակցութեան նիստերը նշանակվում են նախագահի կողմից։ Իսկ անդամներից զէթ մէկի ցանկութեամբ նախագահը հրաւիրում է նիստ։

4) Խորհրդակցութիւնը ունի յատուկ գրծավարութիւն և կազմում է իր նիստերի արձանագրութիւնը։

5) Բոլոր խորհրդակցութիւնները կազմված են միմեանց հետ յաջորդական կապերով թէ միմեանց և թէ կենտրօնական խորհրդակցութեան հետ։

6) Իւրաքանչիւր խորհրդակցութեան գրաղմունքներն են հայերի և Թուրքերի մէջ ծագող դէպքերի և ընդհարումների քննութիւնը և առհասարակ այն բոլոր հարցերը, որոնց ծագումը լարում է հայերի և Թուրքերի յարաբերութիւնները միմեանց հետ և կարող է տարի լինել ընդհարումների։

7) Նախորդ յօդուածում յիշված իւրաքանչիւր դէպքերի վերաբերմամբ խորհրդակցութիւնը իր տեղական շրջանում կատարում է տեղական վարչութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ մանրակրկիտ քննութիւն, պարզում է դէպքերի պատճառները, յանցաւորների անձնաւորութիւնները, առանց խրատութիւն դնելու վարչական և մամլուքաց անձերի մէջ, վերջնական կարծիքներ է յայտնում այն միջոցների մասին, որոնց պէտք է ձեռք առնել խաղաղութիւնը վերահաստատելու համար հայերի և Թուրքերի մէջ. նամանաւանդ և յանցաւոր մարդկանց վերաբերեալ։

8) Վնասների և տուգանքների պահանջումը, զանազան միջոցների դիմելը, զէնք պահելու համար պահանջվող վկայականներ տալը կատարվում է վարչական անձերի կողմից, երբ նախապէս ստացված է գրանց մասին խորհրդակցութեան կարծիքը։

9) Խորհրդակցութիւնը իրաւունք ունի վարչութեան համաձայնութեամբ մշակել և իրականացնել կեանքի մէջ այն միջոցները, որոնք վերացնում են հայերի և Թուրքերի մէջ ընփումներ և թիւրիմացութիւններ։

10) Խորհրդակցութեան որոշումները, թէ միաձայն և թէ մեծամասնութեամբ կայացածները, պէտք է կատար ածվեն վարչութեան կողմից։

11) Իւրաքանչիւր տեղական խորհրդակցութիւն իր կատարած քննութիւնը այս կամ այն դէպքի վերաբերեալ անմիջապէս զեկուցանում է կենտրօնական խորհրդակցութեան, կցելով իր որոշումը և ունեցած տեղեկութիւնները, այն է, արդեօք որոշումները գործադրվում են տեղական վարչութեան կողմից թէ ոչ։ Իսկ եթէ որոշումները չեն կատարվում, նրանք պէտք է ուղարկվեն միւս աւելի վերին ատեանին։

12) կենտրօնական խորհրդակցութեան գրաղմունքների շրջանի մէջ մտնում են վերև բերված բոլոր առարկաները։ Նրա իրաւասութեան շրջանը համարվում է Կովկասի այն բոլոր մասերը, ուր հայերը և Թուրքերը խառն են ապրում։ Բացի դրանից կենտրօնական խորհրդակցութիւնը 1) տալիս է Փոխարքային իր զեկուցումները այն որոշումների մասին, որոնք տեղական վարչութիւնների կողմից չեն գործադրվել, 2) ներկայացնել վարչական ներկայացուցիչների կողմից չը վերացված այն առիթների և պատճառների մասին, որոնք առաջ են բերել բարդութիւններ հայերի և Թուրքերի մէջ, 3) տեղական իշխանութիւնների համար կազմել հրահանգներ և ներկայացնել Փոխարքայի հաստատութեան, և 4) հրաւիրել տեղական նահանգական, գաւառական և գաւառամասային և ազգանակութեան ներկայացուցիչների համագումար ժողովներ։

Ծրագրի քննութիւնը այդ նիստում չը վերջացաւ և յետաձգվեց հետագայ նիստին, որ նշանակված է այսօր, կիրակի, մայիսի 28-ին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը։

Յայտարարում եմ ի գիտութիւն ամենքի, որ Թիֆլիսի քաղաքային վարչութեան խնդրանքի համաձայն և Կովկասեան Փոխարքայի թոյլտուութեամբ, այսօրվանից իրաւունք է տրվում ամենուրեք սկսել տէրերի ցանկութեան համաձայն, միայն թէ, ոչ ուշ առաւոտեան ժամի 9-ից, և վերջացնել այդպիսին այն խանութներում, ուր ուտեղէններ են, ոչ վաղ երեկոյեան ժամի 8-ից և ոչ էլ ուշ գիշերվայ ժամի 12-ից, իսկ մանուփակատուրային և գալանտերէյնի, շորեղէնի, կօշիկների, ամանեղէնի և այլն ապրանքավաճառ խանութներում ոչ վաղ երեկոյեան ժամի 7-ից։ Ուտեղէնի առևտուրը ժամի 8-ից յետոյ թողնվում է բացառապէս տէրերի ու ծառայողների կողքին, փոխադարձ համաձայնութեամբ։

Գրասենեակները, մանրավաճառ խանութները, երկաթավաճառ կրպակները, արհեստանոցները և այլ առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւնները փակելու ժամանակը որոշում են նրանց տէրերը։

Ներկայ կարգադրութիւնը զօրութիւն է ըստանում յայտարարութեան օրից, որից յետոյ ծառայութեան չը գնացողները կը համարվեն գործադուլ անողներ և կենթարկվեն անմիջապէս այն պատիժներին, որոնք յիշված են ներկայ տարվայ ապրիլի 25-ին իմ տրած կարգադրութեան մէջ։

Գեներալ-նահանգապետ՝ Տիմօֆեյէվ

Մայիսի 26-ին 1906 թ.

Թիֆլիս։

ՄԱՄՈՒԼ

Ազգայրային հարցը, ինչպէս երևում է, պէտք է երկպառակութիւն առաջ բերի Պետական Դումայի մէջ, որ մինչև այժմ գործում է միահամուռ ներդաշնակութեամբ։ Այդ կարծիքն է յայտնում «Մարանա» լրագիրը, ասելով թէ ազգայրային բէֆօրմի հիմնական կէտերը, որոնք հանդիսացան իրրև ելակէտ վիճաբանութիւնների համար, հանդիպեցին առարկութիւնների և աջ և ձախ կողմից։ Աշխատաւոր մասնախումբը մշակում է այնպիսի օրինագծեր, որոնք աւելի հեռու են գնում կադետների ծրագրից։ Վերջինների մէջ չը նայելով կուսակցական խիստ կարգապահութեան, տարաձայնութիւն է ծագել, որ պարզ արտայայտվեց Պետրաժիցկու և Հերցենշտէյնի ճառերի մէջ։ Հազիւ կարելի լինի միաբան որոշման յանգել, որովհետև շատ մեծ է հայեցքների տարբերութիւնը, շատ անհաշտ են հակառակ շահերը։

Լրագիրը խորհուրդ է տալիս, ի նկատի ունենալով բոպէի անապին կարևորութիւնը, աշխատել կազմել մի այնպիսի մեծամասնութիւն, որ կարողանայ ապահովել աջողութիւնը։ Այդ հնարաւոր կը լինի, եթէ վէճի առարկայ եղող կէտերը վերածվեն մի քանի գլխաւոր կէտերի։ Բաւական է առ այժմ ոչնչով կարողանում է Բրիտանիան գնալ բժշկութեան քննութիւն տալու, սակայն Նորվեգիայի մայրաքաղաքը նրա մէջ մի հրաշալի փոփոխութիւն է առաջ բերում. զրպանում ոչ մի փող չունեցող կրկոտ երիտասարդը ֆիզիօլօգիայի և անատոմիայի քննութիւններից աւելի պօլիտիկայով, հասարակական խնդիրներով է տարվում։

Ահա այստեղ քսանումէկ տարեկան հասակում նա գրում է իր թատերական առաջին երկը՝ «Կատիլինան»-ն մայրաքաղաքի թատրոնի համար։ Պիէսը մերժվեց, սակայն՝ մի աղնիւ բարեկամ իր ծախքով տպագրել է տալիս 1850-ին։ Անաջողութիւնը չէ ընկճում անընկճելի կամք ունեցողին։ Նա գրում է «Դումուլուս»-ը, որը աջողում է և խաղացվում։

1852-ից մինչև 1857 Իբսէն Բերկէնի ազգային թատրոնի ըէժիսէօրն ու բանաստեղծն է. նա արդէն իր իսկական կոչման ճանապարհի վրա, իւրաքանչիւր տարին մի նոր պիէս է գրում բեմի համար։

Բաղդը շուտով Իբսէնին մայրաքաղաքն է ձգում, Բրիտանիա, ուր 1856-ից խնամած վարում է Նորվեգիական թատրոնի ըէժիսէօրութեան պաշտօնը։

Այս շրջանին է պատկանում նրա գրուածքներից «Հերկօլանտի կռիւները», «Տիկին Ինգէր էօստերդցի» և «Սիրոյ կատակերգութիւնը», որ անարդի ապմուկ բարձրացրեց։

Այս շրջանում 1858-ին ամուսնանում է Բերկէնի պատօրի աղջկայ հետ, որը մեծ հեղինակի ձեռքում մեծ դեր է կատարում՝ խրախուսելով, քաջալերելով իր ամուսնուն մեծ կուի ասպարէզում։

1863-ին Իբսէն հրատարակում է մի նոր պատմական գրուածք «Թագին ձգողը», որից յետոյ նոյն թուին թողնում է ըէժիսէօրութեան սպանիչ պաշտօնը և Նորվեգիան կառավարութիւնից ապրուստի միջոց չը ճարելով՝ մեկնում է դէպի Հռոմ, ուր միայն չորս տարի (1864—1868) է մնում, բայց՝ այդ կարճ ժամանակամիջոցում բանաստեղծը շատ բան է տեսնում, նրա հոգու մէջ մեծ փոփոխութիւն է առաջ գալիս։

Հռոմումն է, որ Իբսէն կենտրոնանում է հասարակական կեանքի, երևոյթների խորքը թափանցելով, իր փիլիսոփայութիւնը ունենալու կեանքի մասին և «Բրանդ»-ի (1866), «Պիէր Ժէնդ»-ի (1857) և «Կայսրը և Կալիլէէն» նշանաւոր դրամաները տալու։

1868 Իբսէն հաստատվում է Դրեզդէնում, որտեղից սկսում է մի շարք ճանապարհորդութիւններ դէպի Կօպէնհագէն, Մաօկհօլմ, Մունեխ, Եգիպտոս և այլն։ 1867-ից սկսած մեծ դրամատուրգի թափառական շրջանն է և միաժամանակ գրական մեծ բեղմնաւորութեանը. 1877-ին գրում է «Հասարակութեան նեցուկները», 1879-ին «Տիկնիկի տունը» (Նօրա), 1881-ին «Վերադարձողները», 1882-ին՝ «Ժողովրդի թշնամին» (Դոկտօր Շտոկման), 1884-ին՝ «Վայրենի բադը», 1886-ին՝ «Ռոսմերսհօլմ», 1888-ին՝ «Ծովի տիկինը», 1891-ին՝ «Հեդդա Ժէբլեր», 1892-ին՝ «Ժան-Գապրիէլ Բօրքման», 1900-ին՝ «Երբ մենք յարութիւն կառնենք մեռելներից»։

Այսպէս ահա 25 տարի հայրենիքից հեռու այսքան աշխատութիւն կատարած, մեծ հեղինակի անունով, գրական մեծ փառքով վերադառնում է իր հայրենի երկիրը, ուր առաջ այնքան վատ, այնքան անմտութեամբ և կոպտութեամբ էին վերաբերում դէպի մեծ գրողի գրական վաստակները։ Նորվեգիայի խորհրդարանը, որ ամենաբարձր ընկերութիւնը, ուսուցիչները, ինքնուրոյն մտաւորականները, ինչպէս նաև գրականագէտները, ինչպէս նաև ամենաբարձր պաշտօնեաները, ինչպէս նաև ինքը թագաւորը, ամենայն հանդիսաւորութեամբ ընդունեցին նրան։

ղանիի գալուն և հաւանականութիւն կայ, որ սա այդ պարլամենտական խմբակի լիդերը պիտի դառնայ։

Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎԻ ՆԱՄԱԿԸ

«Курьеръ» լրագրի մէջ տպագրված է Գ. Վ. Պլեխանովի հետեւեալ նամակը. «Ընկեր-բանտարկեալներ։ Ձեզ եմ ես դիմում այս տողերով մի ուրախալի մասնաւորում, որից աւելի կարեւորը այնպիսի ժամանակներս մեր հայրենիքում չէ եղել վերջին ժամանակներս մեր հայրենիքի մէջ։ Կառավարութիւնը իր զեկավար մինիստր Գոբեմիկինի միջոցով մերժուվար պատասխանեց Պետական Դումայի բոլոր պահանջներին։ Նա ամենատիպ չէ տալիս այն բոլորանց, որոնց ինքը յանցաւոր է յայտարարվում, որոնց պատճառով, որ նրանք մարանչում էին ազատութեան համար, ոչ էլ հող է տալիս այն գիւղացիներին, որն իր շնորհիւ մուրացկանութեան է հասել։ Իսկ ինչ անենք։ Ահա մի հարց, որը դուք ձեր սեփական գործի օգուտի համար, մեր ամբողջ հայրենիքի օգուտի համար պէտք է մտածէք, կշռադատէք բոլորովին սառնասիրտ կերպով, չը նայելով, որ ձեր սրտերում բորբոքվում է արդար զայրոյթի հուրը։ Դուք պարտաւոր էք խուսափել այնպիսի սխալներից, որոնք կարող են պատճառել խոր, գուցէ և անուղղելի ցնա մեր ամբողջ շարժմանը։

Անհնարաւոր մեր լինել պրովոկացիայի։ Կառավարութեան ոյժը պահանջում է օրէցօր, որովհետև օրէցօր մեր ժողովուրդը աւելի ու աւելի է պարզ կերպով գիտակցում, որ նա կառավարութիւնից ոչինչ չէ կարող ստանալ, բայց եթէ միայն նորանոր ճնշումներ։ Կառավարութիւնը տեսնում է այդ և ուզում է ձեզ կրկին յայտարարել, քանի որ իր ոյժը ու ամբոխինը դեռ աւելի է ձերինից։ Մեք խաբվել պրովոկացիայով, մեք յափշտակվել անկեղծ, բայց անխոհեմ մարդկանց ճառերով, որոնք պարտաւոր են ձեզ վէճքի կոչ անելու։ Կուիզասնեռվել այժմ՝ նշանակում է չարաչար պարտութիւն կրել։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Մեր կառավարութիւնը, որ կազմակերպում է ան հարիւրային ջարդեր և անշեղ կերպով ճնշում է մտքի ազատութեան ամեն մի արտայայտութիւնը, չէ արգելում ամենախստագոյն կրթիկայի ենթարկել Պետական Դումային։ Ինչպէս էք դուք կարծում, ինչու է նա այդպէս վարվում։ Որովհետև նա ուզում է ձեզ բակացիայի համար զարմիկ դարձնել։ Յեղափոխականները յարձակվում են Պետական Դումայի վրա,—ասում է ինքն իրան Գոբեմիկինը,—դա շատ լաւ բան է այժմ, երբ մեր մերժումը կատարելու Պետական Դումայի պահանջները, ընդհարում պէտք է առաջացնի մեր ու նրա մէջ։ Որքան աւելի վարկաբեկի լինի Դուման ժողովրդի աչքում, այնքան նա աւելի թոյլ կերպով կը պաշտպանէ նրան և աւելի հեշտութեամբ կարելի է փակել նրա բերանը, իսկ եթէ հարկաւոր լինի, մինչև անգամ բոլորովին ցրելու նրան։ Իսկ յեղափոխականներին ես կը սանձահարեմ գնդակահարների միջոցով։ Ընկեր-բանտարկեալներ, դուք անպատճառ պէտք է խախտէք պ. Գոբեմիկինի այդ ծրագիրը։ Մեք շփոթուել նրանով, որ Դումայում գերիշխում են բուրժուազիան կուսակցութիւնները։ Ոչ թէ նրա համար է առում պ. Գոբեմիկինը Դումային, որ նրա մէջ գերակշռում է բուրժուազիան, այլ այն պատճառով, որ նրա մէջ գերակշռող բուրժուազիան պահանջում է ազատութիւն ամենամի համար և հող գիւղացիութեան համար։ Բուրժուազիայի դէմ չէ ուղղել Գոբեմիկինը իր մերժումը, այլ ամբողջ ժողովուրդի դէմ։ Եւ ամբողջ ժողովուրդն էլ պէտք է հարկադրել Գոբեմիկինին ափսոսալ այդ մերժման համար։ Ամբողջ ժողովուրդը միանամուռ ոյժերով պիտի և պիտայանի Դուման։ Ահեռ մի տատանում այդ դէպքում անրաժան կը լինէր մեր ժողովուրդին։ Նա ցոյց կը տար, որ նա դեռ ևս չէ ըմբռնել թէ ինչի մէջ է կայանում ներկայ ժամանակ ամենաանհրաժեշտ քաղաքական խնդիրը։ Սօցիալիզմի աշող կուսի համար հարկաւոր է քաղաքական ազատութիւն։ Իսկ որպէսզի ունենանք քաղաքական ազատութիւն, դրա համար անհրաժեշտ է, որ մենք խանգարենք մեր բէակցիոն կուսակցութեան որոյժիները։

Վայ ձեզ, վայ ամբողջ երկրին, եթէ դուք չէք կենտրոնացնի դրա վրա ձեր բոլոր ջանքերը, ձեր բոլոր ուշադրութիւնը։

Բէակցիան օգուտ կը քաղէ ձեր օրհասական սխալներից և ասրանալի հարուած կը տայ ազատութեան գործին։ Մեք զարմանալ, որ մենք դիմում ենք ձեզ այս կոչով։ Արդէն 80 թւականներից սկսած մենք նախաձեռնում էինք ձեր հանդէս գալը պատմական դեպի վրա և սպասում էինք նրան այնպէս, ինչպէս որ հաւատացեալ հրեաները Մեսսիային են սպասում։ Մենք կրկնում էինք շարունակ, որ ազատագրական շարժումը կը յաղթանակէ միայնում իբրև բանուոր դասակարգի շարժում, կամ ամենևին չէ յաղթանակի։ Եւ այժմ, երբ անցքերը արդարացնում են մեր ամենալաւագիտութիւնները, այժմ, երբ շնորհիւ բանուորների հերոսութեան մեր ազատագրական շարժումը արդէն հեռու չէ յաղթանակից, մենք չենք կարող լռել, բայց մենք մեզ պարտաւոր ենք համարում մատնացոյց անել այն քաղաքական թակարդի վրա, որի մէջ է ուզում ձեզ գրաւել բէակցիան։ Լիովին ձեզ նուիրված Գ. Պլեխանով»։

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

Նուշի, 24 մայիսի

Ելալի խճուղու վրա պատահած վերջին սոսկալի դէպքերը միանգամայն յուսահատեցրել են հասարակութիւնը։ Ոչ թէ միայն շուշեցիներն են, որ երթեւեկում են այդ խճուղով, այլ և հարիւրաւոր գիւղերի ժողովուրդ՝ Նուշու, Զիանչիրի, Զէրբայիլի և Զանգեզուրի գաւառից։

Մինչև երբ պէտք է մենք զոհեր տանք Ադղամին, մինչև երբ մեր արիւնով ողողենք այդ ճանապարհը։—Ասում էին գիւղացիքը։ Նրանք շուշեցիներից աւելի նամուսով գտնվեցան և որոշեցին ուղղակի Դանձակից նոր ճանապարհ բաց անել Թարթառի «Ղաոի-քորփու» վրայով, Մաչէնի գիւղերով մինչև Նուշու հիւսիսային կողմի ձորակը—Ղայբալի, այնտեղից անցկացնելով քաղաքի կողքով դէպի Զանգեզուր։ Այդ մասին կուսապատից և Մաչէնի գիւղերից եկել էին հայեր, յամառ առաջարկութիւն անելով շուշեցիներին, թէ մենք վճռել ենք և շինում ենք նոր ճանապարհ, գիւղից-գիւղ. եթէ ուզում էք դուք էլ մասնակցեցէք և օգնեցէք։

Հասարակութիւնն ինքը ևս զգալով այն ծանրութիւնը, որ կրեց այս մի տարին Եւլախ-Շուշի խճուղուց, որոշեց միանալ գիւղացիների նախաձեռնութեան։ Եւ երեկվայ իր ամբարային կուրում կայացած բազմամարդ ժողովում մի յանձնաժողով ընտրեց մասնագէտ ճարտարապետներից և ծանօթ գիւղացիներից, որ գնայ առտեղեան մի նախագիծ կազմէ թէ՝ ինչ գիւղեր հարկաւոր են մտցնել իրար հետ սայլերի ու կառքերի ճանապարհով և ինչ տեղով կապել այդ հաղորդակցութիւնը Շուշու հետ, որ թէ գիւղացին կարողանայ ազատ ու անվտանգ քաղաք մտնել և թէ շուշեցին՝ Հերկայ արտաւիրքների օգնութիւն։

Շատ ուշ ենք խելքի գալիս։ Ադղամը իր հրամանատար ըէակերով հարիւրաւոր կեանքեր խլեց մեզանից այս մի տարում և միլիոնների կարողութիւն։ Մենք խնայեցինք հէնց ադեսի սկզբից մի քանի հազար բուբլի ծախսել և մեզ համար ուրիշ ճանապարհ բաց անել։ Խնայեցէք՝ մէկին 1,000,000 զոհերով։ Թող վայելին ադղամեցի մեր հարևան բէկերն իրանց քաջարի դահիճներով Եւլախի սիրուն ճանապարհը։ Թող մենք դաշեալ սարերով ու ձորերով անցնենք։ Մենք սովոր ենք քրտնաթոր աշխատանքի, սովոր ենք նեղութիւններին։ Տանենք և այս նեղութիւնը, այս դառնութիւնը, մինչև մեզ կը վիճակվի կամ նոր ղաղ, կամ աւելի չարքաշ կեանք։

Բանենք նոր ճանապարհը։—Դա անհրաժեշտ է, ներկայ պայմաններում հացից ու ջրից աւելի անհրաժեշտ պահանջ։ Թող ձեռք մեկնեն մեր հարուստները, թող չը խնայեն իրանց նուէրը։ Նա շատ չի լինի։ մասնագէտների ասելով հազիւ 20—30 հազար։

Բանենք նոր ճանապարհ, որ դա ծառայէ մեզ համար իբրև նախամակարդակ այն երակթուղու, որին փափագում ենք տեսնել մօտիկ ապագայում։ Սակայն երակթուղու յուսով չը թողնենք նոր ճանապարհը։ Նրա կարօտութիւնը ժամերի, օրերի, ամիսների մէջ է, անյապաղ, անյետաձգելի պահանջ է, իսկ երկաթուղին—կարող է տարի, կամ տարիներ տեւել...

Տ.

ԴԺՈՒՔԻ ԲՈՑՆԸ

Նա եօթ-գլխանի վիշապ է, ամեն մինը մի պատկերով։

Մի մեծ կրկէս բարբարոս զինափորձութեան։—Նա մարդիկ է կլանում, ողջ առողջ մարդիկ։ Նա մտնում է կառուցած, փրփուրը բերանին կեռում, տրաքվող աչքերով մահաբարուս ազդում իր սիրոյը կոխել համարձակվող արարածին և մի թաթը մեկնում է թէ չէ՝ հնդեակ, տասեակ, հարիւրեակ անմեղ գլուխներ ջախջախվում են օձի բերանով կուլ գնացող թռչնածագերի նման։

Նրա սիրոյը պատկվում է, այրվում, խաշվում արեղակի կիզիչ ճառագայթներից։ Նա ճարճատել, աղ ու ձախ ծուռ ու մուռ ճեղքեր է բացել, մեծ ու փոքր խոռոչներ, խոր ու երես—երարան է արել դա, հեղուկների մէջ խորասիեալն չը գնող և որեէ հիւթով իր ծարաւը յագեցնող երաշտը... և ահա հոսում է կարմիր հեղուկը, լցնում պարփակում ճեղքվածները, մի բոպէ միացնում, կապում իրար հետ հոդային զանգուածը և մի փոքր կուշտ զգալով իրան՝ իր կարմիր յագուրդի կարմիր ներկով ծարը կարգում անոյշ մարդկութեան հացիին։

Նա մրցութեան հրապարակ է բաց անում իր այս ու այն գլուխների մէջ, փորձում մէկի կամ միւսի ոյժը, քաջութիւնը... որն է աւելի ուժեղ՝ նրան խրախուսում է՝ «փա՛ռ, փա՛ռ, զոչո՛ղ, զոչո՛ղ» կոչելով, իր մեծ գլխի մեծ թաթը դփելով նրա մէջքին՝ իբրև զովքի, քաջալերի նշան։

Ահա կանգնած են կենդանի արարածները—գունաւոր, վեհերոտ դէմքերով, զգոյշաւոր, վերտիտ մարմնով։ Դրանք մարդիկ են, «մարդ բառ պատկերի, զոր արար Աստուած»։ Նրանք կանգնած են շարէշարէ, իրար ձեռքից բռնած, իրար շղթայված, կարծես այդ ձեռքերի մէջ որոնցով իրանց կենդանութեան մեկ բոյսը։ Բայց... աջ ու ձախ ճայթում է օղը, վզվզում են գեղեցկոյն հարաւով շաղված մեռաղի կոզոներ, անհամար ծակոտիներ բացում մորթու մէջ և կարմիր արիւնը՝ հարիւր ծակերից ցոլացող ցրիչի նման ցանում է իր շուրջը։ Ընկնող մարմինների վերջին վայրը միայն արժանանում են վիշապային գլուխների նեբօնական «փա՛ռ, փա՛ռ» հրճուանքին...։

Եւ մենք ուղարկում ենք, դարձեալ ուղարկում այդ ասանջարանը մեր անմեղ զոհերին։ Ամօթ մեզ։ Մենք ծաղրում ենք մարդկային կեանքը։ Մենք տարապայման հրէշներ ենք։ Մենք սև ժառանգութիւն ենք թողնում մեր սերունդներին, գարշանք մեզ մեծարել գիտցող ազգերին...

Մենք ուղարկում ենք և անվերջ ուղարկում մեր ճանապարհորդներին «եօթ-գլխանի» վիշապների դժոխային սպանդանոցը։

Այդ մեկ չէ, երկու չէ։

Ուղարկում ենք օրերով, ամիսներով, տարիներով։

Զոհում ենք հինգով, տասով, հարիւրով։

Զոհում ենք մարդկանց, կանանց, երեխաներին։ Զոհում ենք հարուստին ու աղքատին, լինի նա Բաքուի զրամատէր Արամեանց, թէ սիսեանցի մշակ մի Սարգիս... Դրանց մէջ խորութիւն չէ գնում ոչ գնդակը, ոչ սուրը, ոչ արիւնածարաւ տարտարոսը և ոչ «եօթ-գլխանի» եղբայրութիւնը...

Ամօթ մեզ։

Մենք ծաղրում ենք մեզ։

Մեզ ծաղրում են և նրանք։ Իսկ մեր գլխավերը բարեկոչ քրքիջներ են արձակում զանազան շլեգոլոն «Տակ-Ալփաներ», որոնք ամեն անգամ գլխի երգումներով հաւատացնում են մեզ «եօթ գլխանիների» մահացութիւնը, բայց և ամեն անգամ սև խաղի շանը տեսնելով իրանց արդարացնում՝ «անմիտներ, չը գիտէք չէ՞ք լսել ձեր տատերից հեքիաթների մէջ, որ քանի կարես եօթ-գլխանի վիշապի գլուխը, այնքան՝ կարածի տեղ երկու անգամ աւելին կը բուսէ»։

—Եւ մեզ անշուշտ բնաջինջ կանէ...

Տ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Սունդուկեանի «Քանդած օջախը»։)

I

Կիրակի, ամսոյ 21-ին, Հալաբարի թատրոնում հայ թատերասէրների խումբը ներկայացրեց Գ. Սունդուկեանի «Քանդած օջախ» երեք գործողութեամբ կօմեդիան և վրացերէն լեզուով (մասնակցութեամբ վրաց սիրողների) «Արկադիաս սաղիլի» (Արկադիի ճաչկերոյթը) 3 պատկերով վոդեվիլը։

Քանիցս անգամ խօսեցել են Սունդուկեանի և նրա պիէսների մասին. մենք կը կամենայինք երկու խօսք ասել նրա «Քանդած օջախի» առիթով։

Մի բան, որ ապշեցնում է հանդիսատեսին Սունդուկեանի պիէսների մէջ դա այն է, որ տասնեակ տարիներ առաջ գրած այդ պիէսները շատ թարմ են ճնչում մեր ժամանակի համար (խօսքս բովանդակութեան մասին է)։

Սունդուկեանի կենդանի և գեղարուեստօրէն ներկայացրած թիֆլիսեցու կեանքը միանգամայն ապշեցնում է հանդիսատեսին. «Քանդած օջախը» կարծես երէկ է գրվել, այնքան ծանօթ են մեզ այդ պիէսի մէջ դուրս բերած դէպքերը։

Այդ պիէսը, որ հեղինակը անուանել է կօմեդիա, երեւի նրա համար, որ մէջը տաղանդաւոր վրձինի ազդու գծերով ցոյց է տրվում թէ ինչպէս մի պատուական նահապետական հայ ընտանիք տապալվում է, քայքայվում կեղծ քաղաքականութեան յուժկու հոսանքից։

Սունդուկեանը որքան վարքագրող, այնքան և մտրակող հրապարակաւոր է. իբրև վարքագրող նա հաւատարիմ է իր նկարագրած կեանքի ամենափոքրիկ մանրամասնութիւնների մէջ անգամ փոտոգրաֆիական ճշտութեամբ։ Նրա տաղանդի այդ կողմն է, որ այնքան կենդանութիւն է տալիս նրա երկերին և հիացնում մեզ։

Սունդուկեանի տաղանդի հրապարակաւոր կան յատկութիւնը երեւում է նրա բոլոր պիէսների մէջ, ևս առաւել «Քանդած օջախի» մէջ. այդ պիէսի հերոս—Օսէփը մի հրապարակաւոր հէրոսական է, որ այնպիսի թունալից բաներով ծաղրում է ժամանակի կեղծ լուսաւորութեան պտուղները։

Մաղը ընդհանրապէս բաւարար անցաւ, թէպէտ գերասարները լաւ չէին սովորել իրանց դերերը. բայց մեզ գործած կը լինենք, եթէ առանձնապէս չը յիշատակենք գլխաւոր դերակատարին (պ. Թորոսեան), որից լաւ Գուլարենց Օսէփ չէր կարող լինել միւս սիրողների մէջ. նա լաւ ուսումնասիրել էր Օսէփի հասկրելի տիպը, որի պատճառով գրեթէ տպաւորութիւն գործեց. առհասարակ այդ սիրողը միշտ բարեխղճութեամբ է վերաբերվում դէպ իր դերը. մեզ գործած կը լինենք նամանպէս, եթէ չը յիշատակենք պ. Ղազարեանին (Գիժ մօղի դերում) որը ջերմ ծափահարութիւնների առաջակայ գարձաւ դահլիճը ծայրէ ծայր լիքը հասարակութեան կողմից. օր. Մուրադեանը սառն էր Նատաշի դերում, մանաւանդ առաջին գործողութեան մէջ, իսկ պ. Տէր-Առաքելեանը մի քիչ տաբօրէնակ էր թւում չինովնիկ Մարմարովի դերում, ոչ թէ նրա համար, որ այդ սիրողը անընդունակ սիրող է—ընդհակառակը դա ընդունակ և շնորհալի սիրողներից է,—այլ որովհետև մեր ժամանակում մի քիչ աբսուրդ է, որ չինովնիկը խօսում է Թիֆլիսի բարբառով։

Վատ չէր լինի և մեր ժամանակի համար, ընկանէն աւելի մօտ կը լինի, եթէ Մարմարովի և Նատաշի լեզուն փոխվի գրական բարբառի։

Թէ ինչպէս անցաւ վոդեվիլը—այդ մասին խօսք չեմ կարող ասել, որովհետև վրացերէն չը գիտեմ։

Գէորգ Ծովհաննեան

II

Այսօր, կիրակի, մայիսի 28-ին Թիֆլիսի Ժողովարանի թատերասրաց խումբը Հալաբարի ժողովրդական թատրոնում տալիս է իր սեզօնի վերջին ներկայացումը։

Մումդն այս տարի մի շարք ներկայացումներ է տուել թէ Հալաբարում և թէ ժողովարանի թատրոնում։ Պէտք է խոստովանել, որ խմբի տուած բոլոր ներկայացումները, շնորհիւ տիկ. Մայսուրեանի ռեժիսորութեան գրեթէ աջողութեամբ են խաղացվել, իսկ թէ մրքան նիւթական զրկանքների և ֆիզիքական չարչարանքների է ենթարկվել խումբը իր ներկայացումների ժամանակ, այդ անկարելի է նկարագրել։ Միմիայն Հալաբարի չորս հարամատչելի ներկայացումներից խումբը վնաս է կրել մօտ 200—250 բուբլի։ Վնասվելու գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ խումբը տոմսակները ծախում է բացառապէս թատրոնի կասայում և զրանով ժողովրդին ընտելացնում է այդ պարտաւոր ընթացքին։

Վերջին ներկայացումը լինելու է «Տրիլբի» դրամա՝ տ. Մայսուրեանի բէնեֆիսին։ Ցարգելի տիկինը, ի նկատի ունենալով խմբի կրած նիւթական վնասները՝ առաջարկել է իր բենեֆիսից գոյացած արժինքներով ծածկել խմբի կրած վնասները։ Տիկնոջ այդ զոհաբերութիւնը պատիւ է յարգելի դերասանուհուն։ Այժմ հալաբարցիներին մնում է քաջալերել տիկնոջը իրանց ներկայութեամբ։ Թող խմեանն նրանք, եթէ այս վերջին ներկայացումով իրանք կը թեթևացնեն խմբի վնասները, միւս սեզօնից իրանք կունենան աւելի կատարելագործված և եռանդուն ներկայացումներ։

Մենք արձանագրելով յարգելի տիկնոջ վարմունքը՝ կոչ էնք անում Հալաբարի ժողովրդին և թատրոն հրաւիրում։

Շնորհակալութիւն անձնուէր խմբին, մանաւանդ այն աջակցութեան համար, որ նրանք վերջին անգամ Թիֆլիսում տրված բոլոր բարեգործական ներկայացումներին մասնակցել են և որ Հալաբարի ներկայացումների ժամանակ նրանք ձրի տոմսակներ են ուղարկել ծխական դպրոցների ուսուցիչներին՝ իրանց չքաւոր աշակերտների ծնողների մէջ ցրվելու։

Յ. Ա.

III

Հինգշաբթի, Հալաբարի թատրոնում սիրողների մի խումբ մի սպանված գրաշարի ընտանիքի օգտին խաղաց «Դեմոնուն» 5 գործ. կօմեդիան։ Ապա մի քանի նոր սիրող օպերատներ երգեցին զանազան երգեր, և պ. Փիրումեան գեղեցիկ կերպով արտասանեց իր հեղինակած կուպլետները և արժանացաւ հանդիսականների բուռն ծափահարութեան։ Ներկայացումը ինչպէս և երգերը լաւ անցան։ Վերջում տեղի ունեցան հերոպական և ասիական պարեր, որ վերջացան կէս գիշերին։

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ԴՐԻՄԻՑ

Մայիսի 22-ին

Ի նկատի ունենալով տեղիս ծխական դպրոցի չափազանց անմխիթար վիճակը նիւթական տեսակէտից, քաղաքիս հայ հասարակութիւնը, մայիսի 11-ին, կազմելով ընդհանուր ծխական ժողով, որոշեց մի խնդրագրով դիմել թեմական առաջնորդին, որպէս զի վերջինս միջնորդէ ուր հարկն է՝ Ղրիմի ս. Խաչ վանքի եկամուտներից այդ դպրոցին տարեկան գոնէ 600 բուբլի յատկացնելու համար։ Վանքի ընդհանուր եկամուտը մինչև այժմ տարեկան 11—12 հազարի էր հասնում, սակայն դպրոցը և ոչ մի գրօշով չէր օգտվում դրանից։ Այս երկրորդ անգամն է, որ մեր հասարակութիւնը դիմեցնում է հայ ազգի հոգեւոր պահանջների կառավարիչ հոգեւոր հարերին իր աղքատ դպրոցի չարքաշ գոյութեան մասին։ Առաջի խնդրագրին, որանից քանի տարի առաջ, գերապատիւ Յուսիկ եպիսկոպոսը «վայելուչ» կերպով պատասխանել էր. «առաւել պատուաւոր համարի, զի հասարակութիւնն ինքնին հոգասցէ վասն դպրոցին»...

Հին Ղրիմի հասարակութեան ստուար մեծամասնութիւնը կազմում է աղքատ դասակարգը, որի երեխաները միայն պէտք ունեն դպրոցի. մի ջուխտ ու կենա հարուստները դպրոց զրկելու երեխաներ չունեն։ Դպրոցը պատնում է փակվել, եթէ վերոյիշեալ խնդրագրին վերին իշխանութիւնը մեզ դրական պատասխան չը տայ։ Սպասում ենք հայրական խնամքի...

Սրանից քանի տարի առաջ տեղիս մի քանի պարոնների շրջանում միտք էր յայտնել Աղքատախնամ հոգաբարձութիւն հիմնելու և այդ նպատակով հաւաքել էր 1,200 բուբլի մի գումար։ Սակայն քաղաքական անդպատ պայմանները ի նկատի ունենալով, գործին նախաձեռնողները որոշում են այդ գումարը՝ թեմական համաձայնութեամբ՝ դնել պահական բանկ եկեղեցու անունով։ Այժմ, երբ պայմանները փոխվել են և հնար կայ հոգաբարձութիւնը հիմնել՝ մեր ազատներից մի քանիսը ամեն ձիգ էին թափում այդ գումարով եկեղեցու բագի պատերը շինելու... Գումարը խոստանում էին վերադարձնել, սակայն այդ բանի համար ոչ ոք պատասխանատու չը պիտի լինէր։ Սակայն ծխական ժողովը միանգամայն մերժեց պարոնների այդ տեսակը առաջարկութիւնը ու որոշեց պատերի համար այլ միջոցներ որոնել։ Հոգաբարձութեան նախաձեռնողներին առաջարկվեց դիմել ուր հարկն է՝ որոշած նպատակը իրագործելու համար։

Նախկին վանահայր Նահապետ եպիսկոպոսից յետոյ տակաւին նոր վանահայր չունի տեղիս ս. Խաչ վանքը։ Կոդմական կերպով խմացանք սակայն, որ այդ պաշտօնի համար նշանակվում է Կիւրեղ վարդապետը, ուստի և երկրամարդութիւնը հետագրով խնդրեց Վեհափառին ուղարկել մի առաւել գործունեայ և օգտակար մարդ՝ Կիւրեղի փոխարէն։ Հասարակութիւնը անհրաժեշտ է համարում նոյնպէս ընտրվի հոգաբարձութեան գոյութիւնը վանքապատկան կալուածների կառավարութեան նկատմամբ։ Բաւական է, թող հոգեւոր իշխանութիւնը վերջապէս հասկանայ, որ հասարակութիւնը երբեք չէ կարող համակրանքով ու հաւատով վերաբերվել նշանակվի պաշտօնեաների գործունէութեանը։ Ընտրողական սկզբունք և հասարակական կօնտրոլ բոլոր ինստանցիաներում—ահա ժամանակակից հայ հասարակութեան նշանաբանը մեր հոգեւոր կառավարութեան վերաբերեալ։

Սուրխանեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 25-ին

Ապրիլ ամսի 22-ին, «Յառաջ» լրագրի 76-րդ համարում պ. Ստ. Մազմանեանը մի քաց նամակով մեղադրում է Յեան Նրանում, որ ամսոյ 16-ին Շամքորեցւոց եկեղեցու ծխականների ժողովում, ուր պէտք է ընտրվէին պատգամաւորներ և թեկնածուներ, և որպիսին չը կայցա ծխականների օրինական թի բացակայելու պատճառով, ևս որպէս թէ պ. Ստ. Մազմանեան բացակայութեան ժամանակ անտեղի «ասէկսէներ» եմ յարուցել նրա հասցէին և «համեմելով ինձ յատուկ ոճով» մեղադրանք, ժողով չը կայանալու պատճառը վերագրել եմ նրա ներկայութեան և ազատացիայի։ Ի վերջոյ առաջարկում է ինձ ժամուն միջոցով պատասխանել իր նախամտածված նամակին, որը աւելի շատ որոշ միտումների, քան թիւրիմացութեան արդիւնք է։

Յարգելով լրագրական էտիկան, ես երբէք ինձ թոյլ չէի տայ հրապարակով պատասխանել ձեր անհիմն, ճշտութեան կարօտ զանազանքին, բայց որովհետև դուք հակառակ պարագայում սպանում էք «խայտառակ զրպարտիչ» ճանաչել ինձ, ուստի ես ստիպված եմ, իմ դէմ ուղղած ձեր կեղտոտ զրպարտութիւնների դիմաց պահանջել ձեզանից փաստեր։

Երեւում է դուք, պ. Մազմանեան, դիւրահաւատ էք բանրասանքների, և առանց ստուգելու ձեր ստացած ստայօղ լուրերը, գիտէք յուզվել և այդ յուզմունքի անբարեխիղճ արդիւնքը խմբագրատուն վազցնել։ Ինչու՞ երբ ինքս անձամբ ներկայացայ ձեզանից բացատրութիւն պահանջելու, չը շտապեցիք փաստացի ապացուցանել իմ յանցանքը, այլ միայն կարողացաք իմ ընկերոջս ներկայութեամբ մատանիշ անել մի քանի անձնաւորութիւնների, որոնց ցուցմունքի համաձայն և կազմել էք՝ «Ճշմարտասէս» նամակը։

Չը մոռանաք նոյնպէս, որ ձեր խոստման համաձայն պէտք է գայիք երկրորդ օրը վերընտրութեան ժողովին, և այն հասարակութեան առաջ, որը լսած պէտք է լինէր ձեր դէմ ուղղած իմ խօսքերը, ներկայացնէիք ինձ ձեր երեսի լրատուներին։ Դուք չեկաք և այդ փաստ է, որ դուք վատահ չէք ձեր գրածների ճշմարտութեան, վերջապէս յանուն արդարադատութեան և հրապարակային անաչառութեան, հրաւիրում եմ ձեզ լրագրի միջոցով պարզել ձեր նամակի թիւրիմացութիւնը կամ ստուգութիւնը ընդարձակ փաստերով, ապա թէ ոչ՝ դուք ինքներդ ճանաչվում էք «խայտառակ զրպարտիչ» մի անուն, որ 28-ամեայ պաշտօնավարութեան ժամանակաշրջանում, թէ հոգեւոր իշխանութեան և թէ ծխականների կողմից ոչ մի մեղադրանքի չէ ենթարկվել, բացի ձեր այժմեան թիւր և անհիմն զրպարտութիւնից։

Շմաւոն քահ. Տէր-Բարսեղեանց

Թիֆլիս, 27 մայիսի

Ինչպէս «Մշակի» նախընթաց համարներից մէկում հաղորդված էր, առաջիկայ ուսումնական տարուց վճռված է բացել Մանթաշեանի առևտրական ուսումնարանում, որ գտնվում է Հալաբարում, 3 նոր դասարան (1 և 2 նախակրթական և առաջին դասատուն), սակայն ներկայումս քաղաքիս մէջ հոգաբարձական կազմը միանգամայն բացակայ է և 2 հոգի են մնացել, որոնք ինչպէս իմանում ենք, նոյնպէս այս մտադիր օրերս պիտի մեկնեն քաղաքից, այն ինչ՝ այժմեանից անհրաժեշտ է համարվում այդ նոր դասարանների կազմակերպութեան և պահպանութեան ծախսի համար հոգացողութիւն և կարգադրութիւն։ Այդ տարօրինակ դրութիւնը, կաշկանդելով յիշեալ ուսումնարանի տեսչի ձեռքերը, միևնոյն ժամանակ երկրայութեան և անյայտութեան պատճառ է հանդիսանում ծնողների համար, որոնք իրաց երեխաներին ցանկանում են յանձնել այդ ուսումնարանի նոր բացվելիք դասարանները։ Թ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիս է եկել անգլիական մի հոգեւոր անձ՝ առաջնորդ Կօլլինգ։ Երէկ, մայիսի 27-ին, երեկոյեան 5½ ժամին նա այցելեց Թիֆլիսի հայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանին։ Կօլլինգ շրջել է ամբողջ հարաւային Ռուսաստանը, եղել է Բագուում և այժմ ուղեւորվում է Բումինիա։ Նրա պաշտօնն է հովել հարաւային Եւրօպայի անգլիացիներին։ Նա յայտնեց, որ ինքը Պօլսում ծանօթ է հայոց պատրիարքին և նշանաւոր հոգեւորականների հետ։ Յետ յայտնելով, որ կարող չէ անձամբ Վեհափառ Կաթողիկոսին ներկայանալ, խնդրեց Թիֆլիսի առաջնորդին հաղորդել նրան իր յարգանքի ողջոյնը։ Առաջնորդը տուեց մանրամասն հայ եկեղեցու և հոգեւորականների մասին Կօլլինգի խնդրած տեղեկութիւնները։ Կօլլինգ իջաւ դէպի Վանքի եկեղեցին, որ կատարվում էր ժամերգութիւն։ Նոյն երեկոյեան Թիֆլիսի առաջնորդը փոխայցելութիւն արաւ Կօլլինգին։

Մայիսի 27-ին, առաւօտեան ժամի 10-ին քաղաքային լօմբարդի կառավարիչ Ասլամազովը դուրս հանեց գանձարանից երկու արկղ, մէկը մեծ, իսկ միւսը՝ փոքր։ Առաջինում թանգագին իրեղէններ կային, իսկ երկրորդում՝ 2089 ր. 31 կօպէկ փող։ Երբ նա այդ արկղները արտելլէրի ու պահապանների հետ միասին լօմբարդի սենեակն էր տանում և արդէն փողի արկղը ներս էր տարված, 4 հոգի անյայտ նշագրծներ ներսից դէմ են դուրս գալիս և տարճանակները ուղղելով նրանց վրա, պահանջում են ձեռքները բարձրացնել, իսկ պահապան Անտոն Զիվիլիին հրամայում են պառկել, ապա վերցնելով փողի արկղը՝ ուզում են դուրս գալ հեռանալու, բայց դրսից պահապան ծառան, որ կանգնած է եղել մեծ արկղի մօտ, դուրս ամուր փակում է և չէ թողնում դուրս գալ։ Զարագործները ստիպված են լինում կրտրել լուսամուտը ու դուրս գալ։ Այդ ժամանակ ծառան նրանց հետից տարճանակից գնդակներ է արձակում, որից սպանվում է բոլորովին անմեղ ու կողմնակի մի երիտասարդ Արզար Յարութիւնեան Մարգսեանց։ Իսկ չարագործները, դրսում պահապան կանգնած ընկերների հետ միասին, երկու մասի են բաժանվում. մի մասը առաջից է տարճանակ արձակում ու արկղը փախցնում, իսկ միւս մասը՝ հետից, այնպէս որ անգէն ժողովուրդը, մինչև իսկ զինուորները ու զօրօգուտները սարսափած փախչում են այդտեղից, դատարկում փողոցը, իսկ չարագործները անարգել անյայտանում են։ Ինչպէս ասում են, դեռ երկու շաբաթ առաջ են մտադիր եղել լօմբարդի վրա յարձակվելու և կողոպտելու, բայց շնորհիւ ձեռք առաջ նախազգութիւնների, չարագործները հրաժարվել են փորձից։ Այդ մասին քաղաքային վարչութիւնը իբրև թէ գեկուցել է ուր հարկն է, բայց թէ ինչու հսկողութիւն չէ եղել նշանակված, դա բոլորովին ապշեցուցիչ է։ Ժողովուրդը շարունակ գրված է սարսափի ու անարեւութեան ճնշման տակ, իսկ չարագործները դրութեան տէրն ու հրամանատիչն են հանդիսանում։ Կողոպտեցին ժողովրդի փողը, թափվեց անմեղ մարդու արիւնը, իսկ ոստիկանութիւնը իր ոյժը միայն խաղաղ քաղաքացիների վրա է փորձում և փախուստ տալիս տերրօրիստների ու ասասկների առաջ։ Եւ էկս ժամից յետոյ զէպքի վայրն են գալիս գեներալ-նահանգապետը, ոստիկանապետը, քաղաքագլուխը Բարգային թափված արիւնը տեսնելու, ջարդված ապակիները դիտելու և չոր ու ցամաք փաստը արձանագրելու տիրապետող ընդհանուր կարգերի հիման վրա։

Մայիսի 26-ին, երեկոյեան ժամի 9-ին ուր հոգի չարագործներ Նիկոլայէվսկի-փողոցի վրա ապրող պարսկական գեներալ-հիւպատոս Մէջլեթ-Սուլթանի բնակարանն են ներս խուժում ու պահանջում են տալ 500 բուբլի փող։ Երկար սակարկութիւնից յետոյ չարագործները համաձայնվում են տալ 20 բուբլի ու հեռանալ։ Երէկ, մայիսի 27-ին, ցերեկվայ ժամի 11-ին երկու հոգի մօտենում են նրա բնակարանի դրանը ու սկսում են զանգահարել։ Դուրս է գալիս գեներալի ադիւտանտը, ուստրհանպատակ Մօրիս Ֆադրի ու հարցնում է, թէ ինչու են կամենում, և պատասխան ստանալով, որ գեներալին են ուզում տեսնել, յայտնում է, որ նա չէ կարող ըն

անայայտ չարագործներ փորձել էին կոտրել Բազարչի փողոցի վրա գտնվող Սարգսյանի կաշուդեղենի խանութը, բայց տանտերը Արշավիր անունով մարդը նկատել և յայտնել էր այդ մասին Սարգսյանին։ Այդպիսով չարագործներին չէր աջողվել իրագործել իրանց ցանկութիւնը։ Չարագործներից երկուսը Դուշեթի գաւառի բնակիչներ՝ Սիմոն Զավախիշվիլի և Այվազանդրեան այդու այդպանը ձերբակալված են։

—

Կրծանոցի ճանապարհի վրա, հրէաների գերեզմանատան մօտ 2 անայայտ չարագործներ կողոպտել էին անցորդ Վալերեան Նորէյկօին, խլելով նրանից 100 բուբլի կանխիկ դրամ, 950 բուբլու 3 հատ մուրհակ, 2 մուրհակ պետական բանկի Բաթումի բաժանմունքի 100 բուբլու, 2 հատ պահեստագրամի ընկալագիր, Սուխումի փոխադարձ վարկի ընկերութեան պահեստագրամի 2400 բուբլանոց մի տոմսակ և մի մասնաւոր ընկալագիր 267 բուբլու և անցագիր։ Կողոպտողները անայայտացան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ

Եպիսկոպոսների համագումարը։ Պարիզում այժմ կայանում է Ֆրանսիական եպիսկոպոսների խորհրդակցութիւնը՝ այն դիրքի մասին, որ կաթոլիկութիւնը պէտք է բռնէ Ֆրանսիայում եկեղեցին պետութիւնից բաժանելու հարցի վերաբերմամբ։

Ֆրանսիայում կաթոլիկ եկեղեցու բարձր հոգեորականութեան մէջ նկատւում է երեք գլխաւոր հոսանք այդ հարցի վերաբերմամբ։ Օրէնքի անհաշտ հակառակորդների շարքում, որոնց գլուխ են կանգնած Լիոնի արքեպիսկոպոսը և Նանսիի ու Մոնպելիէի եպիսկոպոսները—որոնք անհրաժեշտ են համարում դիմադրել եկեղեցին պետութիւնից բաժանելուն—մի ուրիշ խումբ, պարզապես ունենալով Բոլոնի և Բորդոյի եպիսկոպոսներին, գտնում է, ընդհակառակը, որ պէտք է հնազանդել օրէնքին և, յարմարվելով նոր պայմաններին, նորից նուաճել կաթոլիկ եկեղեցու համար տիրապետող ազդեցութիւն հասարակական կեանքի մէջ։ Միացեալ-Նահանգների օրինակը ցոյց է տալիս, որ կաթոլիկութիւնը նաև նոր պայմաններում ընդունակ է ամրացնել և զարգացնել իր նշանակութիւնը։ Վերջապէս եպիսկոպոսների երրորդ խումբը կամենում է մշակել մի կօմպրոմիս։ Վատիկանի դիտաւորութիւնը մինչև այժմ անայայտ է մնում։ Ցաւմենայն դէպս, պապը հակառակ է խստել դաւանական ընկերակցութիւններ կազմելուն դէմ, հովիւների և հօտերի հետ միասին, որոնց, նոր օրէնքով, յանձնվում է եկեղեցական գոյքերի կառավարութիւնը։ Նա հնարաւոր է համարում կազմել միայն կանոնական ընկերակցութիւններ, որոնց անդամները փոխադարձօրէն պարտաւոր էին երդմամբ հետևել կանոնական օրէնքներին։ Սակայն Ֆրանսիայի հոգեորականների մի մասը չեն հաստատում պապի այդ պատուէրին և որդէն կազմել են մի քանի դաւանական դաշնակցութիւններ։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Նիստը բացվում է ժամը 11 և 40 րոպէին։ Նախագահ Մուրոմցեվը զեկուցանում է, որ մինիստրների խորհրդի նախագահը—«Իրաւ. Վեստն.»-ում տպված հեռագիրների առիթով Դումայի տրած հարցապնդման պատասխանել է, թէ մինիստրութիւնը կարող է պատասխանել սոսկ այն հարցապնդումներին, որ վերաբերում են Դումայի գործունէութեան։ Այն ժամանակ ինքը (Մուրոմցեվը) գրել է մի նամակ, որի մէջ յայտնել է, թէ այդ հարցապնդումը Դումայի արել է օրէնսդիր բարձր հաստատութեան արժանապատուութիւնը պահելու ցանկութիւնից դրված, յենվելով «Իրաւ. Վեստն.»-ում տպված մի շարք անհեթեթ հեռագիրների վրա։

Պէտրունկեվիչի առաջարկութեամբ ընդունվում է հետևեալ ձևակերպութիւնը. «Պետական Դուման հաւանութիւն տալով և ընդունելով նախագահի գործողութիւնը, անցնում է հերթական գործերին» (ծափահարութիւններ)։

Քարտուղարի օգնական Կոկոշկինը կարդում է մինիստրների խորհրդի պատասխանը Դումայի գրութեան, որի մէջ յայտնված էր, որ մահվան պատիժը վերացնելու նախագծի քննութեան մէկ ամիսը չէ կարելի կրճատել։

Նաբոկովը կարդում է, որ Դուման ակամայից պէտք է պահպանէ նրա օրէնսդրական գործունէութեան լեգալ սահմանափակումները։ Բայց և մահվան պատժի հարցը ունի խորոդերդական նշանակութիւն։ Հարկաւոր է թողնել մինիստրների խղճին, որ թերևս դադարեցնել տան մահվան պատժի գործադրութիւնը։

Ռօգինբաումը գտնում է, որ մինիստրների պատասխանատուութեան մէջ նշմարվում է հասարակ օբստրուկցիա։

Միպիագինը կարդում է Սեվաստոպոլից իր ստացած հեռագիրները, որ յայտնում են՝ թէ մայիսի 14-ի ռմբաձիգները զինուորական դատարանի վճռով մահվան են դատապարտվել, խնդրում է պատուին յանձնարարել նախագահին, որ սա միջնորդէ կայսրի առաջ՝ ի կատար չածել մահվան պատիժը գոնէ մէկ ամսից ոչ կանուխ, մինչև որ Դուման կը մշակէ համապատասխան օրէնագիծը։

Նակրասովը հակառակ է որևէ եղակացութիւն մշակելուն, ասելով որ այժմեան անօրինական ժամանակում չը պէտք է բաւականանալ բէզոլիւցիաներ կայացնելով, անհրաժեշտ է օրէնսդիր լինել։ Առաջարկում է բարձի թողնելով մինիստրների մերժումը,—անմիջապէս ձեռնարկել մահվան պատիժը վերացնելու օրինագծի քննութեան։

Անիկինը եւ Ազադինը պաշտպանում են այդ առաջարկը, որով Ալազինը կրկնակի կանչնեցնվում է նախագահից՝ առաջին անգամ երբ նա յիշեցնում է սև հարիւրեակի «Իրաւ. Վեստն.»-ում տպված պրոպագանդի մասին—նախագահը յայտնում է, որ այդ փաստի ակնյայտ լինելը դեռ ևս ապացուցված չէ։ Երկրորդ անգամ—երբ նա ասում էր, որ երկու ոստիներն էլ—մինիստրութիւնը և Դուման կը ցրվին միայն այն ժամանակ, երբ մէկն ու մէկը կը ցնայ իր տեղում։ Նախագահը բացատրում է, որ պալատը չէ կարող քննադատել այն, թէ ով ում պէտք է ոչնչացնէ։ Ալազինը բացատրում է, որ նա մտադիր չէ ֆիզիքապէս մինիստրութեան ոչնչացնել և այդ խօսքը գործածեց փոխաբերական մտքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Լոկօսը առաջարկում է անմիջապէս անցնել մահվան պատիժը վերացնելու նախագծի քննութեան։

Կոմս Հէդդենը նկատում է, որ Միտպեռը կուսակցութիւնից դուրս է կանգնած։ Անհրաժեշտ է, որ հերթական հարցերին անցնելու առիթով արած պատճառաբանութիւնը սահմանադրական եղանակով կատարվի։

Գարեցկին մի ուղղումն է առաջարկում։

Բոդիչեվը յայտնում է, որ մինիստրները աշխատում են իրանց մեղքը Միապետի վրա գցել, բայց Դուման յետ չի կանենայ այն հոգից, որի վրա կանգնած այժ ունի քննելու մահվան պատժի վերացման հարցը. այդպիսով Դուման յամառութեամբ հակադիր այժ է ներկայացնում իրանից։ Պէտք է ասել, որ սրանից յետոյ ամեն մի մահվան պատասխանատուութիւնը ընկնում է մինիստրների խղճի վրա, որոնք Պիտատոսի դէրից անցնում են դահիճների դերին։

Լեդնիցկին ասում է, որ բարձրագոյն իշխանութեան հարկաւոր է յեղափոխութեան յորձանքի մէջ քաշել։ Թող այդ բանում նախաձեռնութիւնը մինիստրներին պատկանէ։

Միխայլիչենկօն առաջարկում է դիմել ժողովրդի իշխանութեան և հիմնադիր ժողով գումարել։ Նախագահը երկու անգամ նրան ընդհատում է։

Պետրաժեցկին չէ հասկանում—ինչու աշխատաւորների խմբակը փոթորկվում է։ Պէտք է նախատեսվէր և դժուարութիւններ։ Չը պէտք է յոյս տրվէր՝ որ կարելի է նստել փափուկ բազկաթոռներում և զրուցել խաղաղ կերպով խելօք մինիստրների հետ։

Օգորոդնիկովը ասում է, որ արեան նշաններ են մտնում Դումա և խանդարում են աշխատել, Առաջարկում է յանձնարարել նախագահին՝ դիմել Միապետին։

Մարեինկովը յայտնում է, որ Դումայի ոչինչ չէ կարող ասել ժողովրդին։ Չը կայ ամենախա, մինչդեռ մահվան պատիժները և կամայականութիւններն ու սանձարձակութիւնները շարունակվում են։ Կօմպրոմիսներ չը պէտք է թոյլ տալ, յեղափոխութեան հեռանկարը նկատվում է պրէնկ։

Կօլոչիվսկին մտնում է Նաբոկովի կարծիքի հետ. բայց առաջարկում է մասնաւոր կերպով դիմել բարձրագոյն իշխանութեան և խնդրել՝ դադարեցնել և վերջ տալ մահվան պատժին մինչև ժողովայ ամիս։

Նաբոկովը պատասխանում է աշխատաւորների խմբակի հասցէին ուղղած յարձակումներին և գրում է, որ ծայրահեղ ձախակողմեան կուսակցութիւնները բէակցիայի ձեռքում խաղալիք են դարձել։

Նախագահը քուէարկութեան է դնում Սիպագինի առաջարկութիւնը՝ յանձնարարել նախագահին, որ նա Դումայի կողմից դիմէ Միապետին։

Առաջարկութիւնը մերժվում է։

Զայների առաւելութեամբ ընդունվում է Նաբոկովի հետևեալ բանաձևը. «Պետական Դուման լսելով մինիստրութեան յայտարարութիւնը, որով մինիստրութիւնը արգելքներ է դնում մահվան պատիժը վերացնելու օրինագծի քննութեան, և, ընդունելով, որ այդպիսի վերացման անհրաժեշտութեան նախանձախնդիր է դիտութիւնը, իսկ հարցի լուծումը խմբագրական մասնաժողովը պատրաստել է արդէն, և որ սրանից յետոյ մահվան պատիժը երկրի համար արդարադատութեան ակտ չէ կարող ծառայել, այլ նա սոսկ սպանութեան մի մնչոց է, անցնում է հերթական գործերի»։

Յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է 4 ժամ 10 րոպէին։ Տեղի է ունենում այն մասնաժողովի 29 անդամների ընտրութիւնը, որ քննելու է կառավարչական հաստատութիւնների և անձերի ապօրէն գործողութիւնները։

Դուման դրանից յետոյ անցնում է նակազի յօդուածային քննութեան։ Քննութիւնից յետոյ Դուման ընդունում է նակազի բոլոր 29 յօդուածները անշնչն փոփոխութիւններով, և ապա արդէն անցնում է աշխատաւոր խմբակի առաջարկին՝ կրճատել ազգարարային հարցի վճռաբանութիւնները և այդ հարցը յանձնել տեղական մասնաժողովներին։

Դումայի նիրանցքներում սառրազրվում է ազգաբնակութեան ողջոյն կոչը, որի մէջ ասված է.—դնել կայսրին և միջնորդել դադարեցնելու մահվան պատիժները. մինչև որ մահվան պատժի մասին մի նոր օրէնք մշակվի։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մայիսի։ Պետական Խորհուրդ։ Նիստը բացվում է ցերեկվայ ժամը 11 և 5 րոպէին։ Նախագահում է Ֆրիշը։ Մինիստրներից ներկայ է մրայն Շվանէնբախը։ Կրասօվսկին զեկուցանում է Խորհրդի անդամների լիազօրութիւնները ստուգող մասնաժողովի գործունէութեան հետևանքների մասին։ Առևտրի և արդիւնաբերութեան կողմից կատարված ընտրութիւնները հաստատվում են Խորհրդից։ Երկար վիճաբանութիւններից յետոյ հաստատվում են նաև գիտութեանց ճեմարանի և համալսարանների կողմից ընտրված անդամների ընտրութիւնները։ Խորհուրդը ընդունում է պր. Կլիժէվսկու հրաժարականը։ Հաստատվում են նամանակ զէմստվոների, ազնուականների համագումարի, հողատէրերի, անզէմստվո նահանգների, լէհական թագաւորութեան և ուղղափառ հոգեորականութեան կողմից կատարված ընտրութիւնները։ Զէն հաստատվում Ուֆիմսկի զէմստվոյի կողմից ընտրված Կուզուշէվի և կուսակրօն հոգեորականութեան 3 անդամների ընտրութիւնները, որովհետև վերոյիշեալ անձերի ընտրութեան եղանակի մասին ճիշտ անդեկութիւններ չը կային։ Նիստը փակված է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի։ Լեհական թագաւորութեան մի խումբ անդամներ թւով 30-ից աւելի միացել են ազգայնական սկզբունքներով իրար հետ և պաշտօնապէս ընդունել են «польское коло» անունը։

ՋԻՏՍ. 25 մայիսի։ Բենէնկամպը մեկնեց Պետերբուրգ զեկուցանելու ուր հարկն է իր գործունէութեան մասին այնտեղից գեներալը կը գնայ Էքսնտուկի բժշկելու համար։ Գրոդէկովի հրամանով Զաքայկալեան երկաթուղուց զօրքերը յետ են կանչված։

ԼՕՆԴՕՆ, 25 մայիսի։ «Դէյլի Տելեգրաֆ»-ին Պէկինից հաղորդում են, որ Մօնղոլիայում ռուսները գրաւել են Կուլոն քաղաքը։

ՍԻԶՐԱՆ։ Այրվեց Սիզրան-Վեռամա երկաթուղու ապրանքների պահեստը, վնասը 10,000-ի է հասնում։

ԼՎՕՎ, 25 մայիսի։ Շատ դեպքեր վարարել են, Սօկալով քաղաքը ջրասոյզ է եղել։ Տեղատեղ երկաթուղու երթևեկութիւնը դադարել է։

ՎԻԵՆՆԱ, 25 մայիսի։ «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսէ» թերթը իբր թէ արժանահաւատ աղբիւրից հաղորդում է, որ Կայսրի և Գօլուխօվսկու ու Չիրշկի միջև տեղի ունեցած խօսակցութեան ժամանակ շօշափվել է և Ռուսաստանի այժմեան ներքին դրութեան հարցը։ Լրագիրների ասելով այդ բացատրվում է նրանով, որ հաւատի շրջանները կարծում են, թէ Ռուսաստանի ներքին գործերի վրա ազդեցութիւն ունենալ եթէ ոչ ցանկալի է, գոնէ կարելի է։ Արժանահաւատ աղբիւրից «Պետ. հեռ. գործ.» թղթակիցը կարող է հաղորդել, որ այդ լուրը հիմքից բոլորովին զուրկ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 մայիսի։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական ֆրակցիան մասնացոյց է արել այն անդամների վրա, որոնք կազմելով մանամաժողով՝ քննելու են կառավարչական անձերի և հաստատութիւնների ապօրէն գործողութիւնները, մշակել է մի շարք միջոցներ՝ ազգարային հարցի վիճաբանութիւնները կրճատելու համար—միւս կուսակցութիւնների հետ նախօրէն համաձայնութիւն կապելու ճանապարհով, անցանկալի է համարել աշխատաւորների խմբակի առաջարկի իրականացումը, հիմնել տեղերում հողային բարեկարգիչ մասնաժողովներ—մինչև որ Դուման ազգարային հարցի հիմնական սկզբունքները կորոշէ, որոշել է ազգարային հարցով զբաղվող Դումայի 88-դ մասնաժողովի մէջ կուսակցութիւնից նշանակել միայն 35 անդամների, թողնելով որ միւս կուսակցութիւնները աւելի մեծ թիւով անդամներ ընտրեն։—Աւտօնոմիստների պարլամենտական ֆրակցիան մայիսի 25-ի ցերեկվայ նիստում ազգարային հարցի վերաբերմամբ մի որոշում կէտի չէ յանգել։ Մեծամասնութիւնը կողմնակից է եղել տեղական հողային բարեկարգիչ մասնաժողովներ հիմնելուն և հողերը տալ իբրև սեփականութիւն, այլ ոչ թէ շահագործելու համար, և հակառակել է պետական հողային ֆոնդին։—Պետական Դումայի նախագահը ստանալով զինուորական, ծովային և արդարադատութեան մինիստրներից յայտարարութիւններ, որոնց մէջ վերջինս յայտնում են թէ անկարելի է օրէնքով որոշած մի ամիսը կրճատել մահվան պատիժը վերացնելու առիթով կազմած օրինագիծը քննելու համար,—ներկայացրել է ժողովրդական ազատութեան պարլամենտական ֆրակցիային։ Այդ յայտարարութիւնները առաջ են բերել եռանդուն և տաք վիճաբանութիւններ, որ վերջացել են մի բանաձևով՝ թէ մինիստրութիւնը իրաւունք չունի մի ամսեայ ժամանակամիջոցը կրճատել։

ՄԱԴՐԻԴ, 25 մայիսի։ Մօրէսը, որի հրաժարականը չընդունվեց թագաւորից, միում է մինիստրախնամագահի պաշտօնում. նա իր վրա է վերցրել նոր մինիստրութիւն կազմելու գործը։

27 մայիսի

ԽԱՐԿՕՎ, 27 մայիսի։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան տեղական բիւրօն շրջաբերական է ուղարկել կուսակցութեան գաւառական քաղաքների և գիւղերի պատգամաւորներին, առաջարկելով կազմել իւրաքանչիւրը իր տեղում կուսակցական մանր միաւորներ (мелкія единицы)—նման դաւառական կոմիտէների—կուսակցութեան ծրագիրը իրականացնելու համար զանազան միտինգներ, ժողովներ և խորհրդակցութիւններ կազմակերպելով։

ՎԼԱԴԻՄԻՐ, 26 մայիսի։ Նահանգապետը ցրել է 20,000 օրինակ յայտարարութիւններ, որոնց մէջ հերքում է Դումայի 14 բանաւոր անդամների կոչը։

ՍՈՒԽՈՒՄ, 26 մայիսի։ Նաւահանգստային ծառայողների գործադուլի պատճառով, քաղաքը ահա երկրորդ շաբաթն է մնացել է առանց պօստի։

ՐԵԱԶԱՆ, 26 մայիսի։ Գրաւված է «Ռեազանի թերթ» լրագրի այսօրվայ համարը, որի մէջ արտատպված է եղել «Курьеръ»-ից Պլէխանովի բանտարկեալներին ուղղած յօդուածը։

ԲԵԼԳՐԱԴ, 27 մայիսի։ Ժամանեց Վիեննայի սերբական դեսպան Վուչէը, որ զեկուցանելու է կառավարութեան առևտրի դաշինքի բանակցութիւնների ելքի մասին։—Ուսանողները հրապարակօրէն այրեցին «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսէ» լրագրի այն համարը, որի մէջ թագաւորի նախկին քարտուղար Վալուդիչը ցնցիկ խօսքերով հաղորդում էր ունգարական և խորվատական քաղաքական գործիչների գալըստեան մասին։ Կիրակի օրը Բալուդիչի կայանում միտինգ է կայանալու։

ԼԻՍԱԲՕՆ 26 մայիսի։ Այսուղի Նունցի Մ'օկլին վախանեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մայիսի։ Քննութեան առնելով երկրորդ կարգի կապիտան Տիրկովի բողոքագիրը, որին ծովային մինիստր Բիրիլովը վիրաւորել էր ծառայութեան ժամանակ և արձակել պաշտօնից, կառավարչական սենատը որոշեց, չը քննելով բողոքագրի այն մասերը, որ չեն դուրս գալիս ծովային մինիստր իրաւասութիւնից,—մատնացոյց անել մինիստրին, որ նա անարգաբար կերպով է արձակել կապիտան Տիրկովին իր պաշտօնից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. մանրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկանաց հ.
Կ. Մ. ԶԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մանրէաբ. վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԳԶԵԼԻՏՍԿԻ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. նեարդի և երեխայոց հ.
ԳԻՆ—ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶՆԵՐԲԻԴԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԻՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԿՈՆՈՐԸ
Ե. Գ ԱԲԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահան.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆոն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱԶԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և հիպնոզ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻՆԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնոզով, կատարվում միկրոսկոպական, բակտերիօլոգական և քիմիական հետազօտութիւններ, նոր-ոչ և ծաղկահատութիւն և սնանուտների (кормилица) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դեղերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։
(Հ.տ.Հ.) 61—100

ԹԻՖԼԻՍԻ ԶՄԵՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, մայիսի 28-ին
Ա. ԵՐԻՑԵԱՆԸ
բարեհաճ մասնակցութեամբ տ.տ. Վարդուհու, Փարանձէմի պ. Միրզաղեանի և թատերասիրաց
կը ներկայացնէ
I
առաջին անգամ
ԻՆՉ ԿԸ ՅԱՆԵՍԱՑՆ ԿԸ ՀՆՉԵՍ
կօմ. 1 գործ. փոխ. Միրզաղեանի
II
ՔԷԼԷԻՄ ԹԷ ՀԱՐՍԱՆԻՔ
վօդ. 2 գործ. փոխ. Միրզաղեանի
Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։
Տոմսակների գինն է 75 կ. մինչև 3 ր. 50 կ.։
Մուտքի տոմսակները 50 կօպէկ։
1—1

Արտասահմանեան Ընկերութեան Համբարձային դահլիճում երեքշաբթի, մայիս 30-ին
կը կայանայ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ
ՀԱՄԵՐԳ
Մասնակցութեամբ տ. Ոսկանեանի, պ.պ. Ս. Բարխուդարեանի, Ս. Բաբանանեանի և նորակազմ երկսեռ երգեցիկ խմբի (100 հոգուց բաղկացած) դեկավարութեամբ՝ Գր. Միրզայեանցի
Կը նուագակցէ Ա. Այզենշտատ
Մանրամասնութիւնները ծրագրում։
Սկիզբն է ուղիղ 8 ժամին
Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում։ 1—1

Լոյս տեսաւ
ԱՌՈՒԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԱՌԱԿՆԵՐԸ
Գինը 50 կօպ.
Ծախվում են «Գուտենբերգ» և կենտրոնական գրավաճառանոցներում։
(Կ.Հ.ու.) 1—3

ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
Մեծ հայ շաբաթաթերթ, հրատարակվում է Ամերիկայի Բոստն քաղաքում։
Բաժանորդագինն է տարեկան՝ Միացեալ-Նահանգների համար 2 դոլար, Ռուսաստանի և այլ երկիրների համար 12 ֆրանկ։ Հասցէն՝ Arménian Publisching Co, P. O. Box, 1731 Boston, Mass. 1—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արզութեան-Երկայնաբազուկի
Յունիսի 1-ից սկսվում են ամառային պարապմունքներ։ Երեխաներ պատրաստվում են բոլոր ուսումնարանների համար։
Երեկոները մանկական խաղեր։
Սօլօլակ, Պակվիչի փողոց № 13։
(Կ.Հ.Կ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ի. ԳՈՒՐԳԵՆՕՎ
Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինեկոլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրոֆ. Տօլչինովի), ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին։ Ընդունելութիւնը ցերեկվայ 10—1 ժամը։ Գօլովինսկի պր. տուն Մադիսոնի № 12։ (Կ.Հ.ու.) 1—15

Ա. Ճ Ո Ի Ր Դ
Ներսիսեան Հայոց Հոգեոր դպրոցի հոգաբարձութիւնը այս տարվայ մայիսի 31-ին, չորեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 8-ին, դպրոցի խորհրդարանում նշանակել է աճուրդ կապալով տալու Ռուսկայա և Վանքի մեծ փողոցների վրա գտնված երկյարկանի շինութեան կառուցումը։ Շինութեան յատակագիծը, նախահաշիւը և պայմանագիրը կարելի է տեսնել դպրոցի խորհրդարանում ամենայն օր, բացի ուրբաթից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը։
(Կ. Ե.) 1—2

ԱԲԱՍԹՈՒՄԱՆ
Մաուչելի գնով տրվում է ամարանոց 6 սենեակից բաղկացած, իրանց յարմարութիւններով, գտնվում է Աբասթումանի կենտրոնումը, հեռաբրատան վերևի յարկում, տուն պ. Նիկողայոս Փրիդոնեանցի, կարելի է առանձին տալ 1, 2, 3. սենեակ, հարցնել Աբասթուման, Տիգրան Մէլտոնեանցին։
(Կ. Չ.) 1—2

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաքուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալեքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր գիշ.
Կր հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Այսօր, կիրակի, մայիսի 28-ին «ԱՂԲԻՒՐ»-«ՏԱՐԱԶԻ» խմբագրատանը, առաւօտեան 11 ժամին, կայանալու է խորհրդակցութիւն ԴԱՐԱԲԱՂԻ ՀՈՂԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿ. հիմնելու առթիւ։ Մասնակից խորհրդակցութեանը հրաւիրվում են Թիֆլիսաբնակ դարաբաղցիները։ Ոչ ոքի առանձին հրաւէր չի ուղարկվիր։
1—1

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ
բարերարներին մի չնչին գումարով օգնել օգնել լինձ, ուսմանակվարձը վճառել, հակառակ դէպքում ուսումնարանի վարչութիւնը արգելում է ինձ յաճախել ուսումնարան։
1—2 Աշակերտ Ա. Դ.

ԴԻՄՈՆԱԶԻԱՒԱՐՏ
Մի հայ օրիորդ,
որը գիտէ նաև հայերէն, ցանկանում է դասեր ունենալ. համաձայն է գնալ ամառանոց։ Հասցէն՝ Тамаринская ул. № 38. д. Исаханова. 1—2

Մի պարոն
որ ծանօթ է Պարսկաստանի բոլոր քաղաքների վաճառականութեան, ցանկանում է ունենալ կառավարչի կամ հաշուապահութեան պաշտօն։ Հասցէն՝ Ելիզավետսկայա № 58. Թումանեանցի մագազինում։ (Շ.Կ.Հ.) 2—3

ՀԱԻԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, մայիսի 28-ին
Թիֆլիսի ժողովարանի հայ թատերասէրների խումբը, բարեհաճ մասնակցութեամբ դերասանուհի տ. Զարէլի, խմբի բեժիսսեր՝ դերասանուհի Օ. Մ. Մայսուրեանի բենեֆիսին կը ներկայացնէ
ՏՐԻԼԲԻ
Դրամա 5 գործ. հեղ. Գ. Դէլի, թարգմ. Յ. Աբէլեանի
Մասնակցում են. տ.տ. Մայսուրեան, Զարէլ, Յակոբեան, օր. Հայկանուշ, պ.պ. Վանչիր, Շերլենան, Սարեան, Եգեկեան, Սաֆարեան, Խիզան, Ապրեսեան, Մարտիրոսեան, Բէժանեան և ուրիշներ։
Սկիզբն է ճիշտ 8½ ժամին երեկոյեան
Տեղերի գները 2 ր. մինչև 20 կ. լօժա—5 ր.։